№ 26 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 4

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 4 № 26

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տան և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տան ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բագարեայա և Բաթումայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակները և ծրարները ուղարկելիս, պէտք է դիտել հետևեալ հասցէն։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցու քառաձայն երգեցիկ խումբը կատարում է Զանգեզուրի գաւառում հայ-թուրքական ընդհարումներին զոհ գնացած՝

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

հոգեհանգիստը։ Ցարգոնոներին խնդրում է ներկայ լինել հոգեհանգստին, որը լինելու է, կիրակի, փետրվարի 5-ին. պատարագի սկիզբն է 10½ ժամին։ 1—2

Յայտարարում եմ իմ յարգելի յաճախորդներին, որ 20-ին նոյեմբերի 1905 թ. միաժամանակ Անդրկովկասեան երկաթուղու Եւլախի ապրանքապահեստի թուղթերը թալանել են և իմ յանձնարարակաց և առևտրի գրասենեակը, ինչպէս և «Գավկազ» և «Մերկուրի» ընկերութեան գրասենեակը, որի գործակալը Եւլախում ես եմ։ Թալանելով տարել են բոլոր ապրանքները և իմ ունեցածը, մինչև անգամ կանխիկ գումարը, երկաթէ գրամարկղից։ Ծառայողները թւով 11 հոգի, հազիւ կարողացան ազատվել սպառնող մահից, փախչելով Բաքու իսկ սեփական շինութիւնը բոլորովին աւերել՝ համարեա երկու ամիս է չեմ կարողանում ոչ մի կերպ ապահովութիւն գտնել Եւլախ գնալու, որովհետև թէ Եւլախ և թէ Նուշի, Եւլախ ճանապարհը գտնվում է երկիղի մէջ։ Հակառակ ցանկութեանս շուտափոյթ վերականգնել գործերի կանոնաւոր ընթացքը, անկարելի է գտնում անապահովութեան պատճառով։ Վերականգնելուց՝ առանձին կը յայտարարեմ։

1—1 Ցարգանոր՝ Ներսէս Մէլիք-Փաշանոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այդպէս ճիշտ չէ լուծվում. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Տեղեկութիւններ գաւառից. Մամուլ. Էլի հին դարմանը. Մեր ցաւերը. Տուէք մեզ մանագահներ. Իմ սաեվիքը թուրք հասարակութեան ստահօներին ու զրպարտիչներին. Դարձեալ կենսրօնացում և ֆեդերացիայի խնդիրը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԱՅԴՊԷՍ ՀԵՇՏ ՉԷ ԼՈՒԾՎՈՒՄ

Մեր առաջն է դրած մի շրջաբերական, որի վերաբերութեամբ հայ ժողովուրդը սովորական պայմաններում կասէր.

—Իմ սրտից ես խօսում, իմ իղձն ես արտայայտում։

Արդարև, միթէ կը գտնվի մի հայ, որ չը ցանկանայ հասատ մնալ իր հողի վրա։

Միթէ մենք չէինք, որ անցեալ տարի ամեն ջանք էինք գործ դնում, որ Նախիջևանի գաւառի հայ գիւղացիները վերադառնան իրանց գիւղերը և ամուր ձեռքերով բռնեն իրանց հայրենիքի հողը։

Բայց մեր առաջ դրած շրջաբերականը բոլորովին ուրիշ արամադրութիւններ և մտքեր է ծնեցնում։

Ի՞նչ շրջաբերական է դա։

Գնդապետ Լեվիցկու շրջաբերականը, որ նա յայտարարել է Ղազախի գաւառի գիւղական համայնքներին։

Գնդապետ Լեվիցկին ուղարկված է կառավարութեան կողմից Ղազախի գաւառը մի համակրելի յանձնարարութեամբ՝ այն է խաղաղացնելու գաւառը։ Նա այցելել է գաւառի մի երկու կէսերը և կորական լեզուով ընդծել է, որ ընդհարումներին պէտք է վերջ դրվի ամենակարճ միջոցում։

Նա յայտնել է մի և նոյն ժամանակ, որ իւրաքանչիւր գազախցի պէտք է իր ընակութեան տեղը վերադառնա անյապաղ կերպով, իսկ եթէ չը վերադառնայ, այն ժամանակ նա կը զրկվի իր հողից և գիւղական հողը կը յանձնվի գաղթականներով բնակեցնելու համար։

II

Մենք լաւ գիտենք, որ գիւղացու համար ամենաթանկագին բաներից մէկը նրա հողն է։

Մենք գիտենք, որ հողի համար նա շատ զոհեր է տուել ամեն ժամանակ, որ երբեմն նոյն իսկ յանցանքներ է գործել։

Մենք գիտենք, որ գիւանաների դռները մաշել է գիւղացին հողի, հողի և հողի մասին։

Եւ ուրեմն միթէ կարելի էր մի բօպէ անգամ կասկածել, որ գիւղացին կը ցանկանայ դաւաճանել իր հողին և հեռանալ նրանից՝ չը վերադառնալու նպատակով։

Ոչ։ Գիւղացին չափազանց ամուր է մտածում իր հողի մասին, քան որ և է ուրիշ հոգատար, բայց ի՞նչպէս նա կարող է պատուէրը կատարել, երբ նա ոչ մի հնար չունի իրան ապահովելու իր գիւղում։

Տուէք ապահովութիւն այդ գիւղի համար, զինեցէք նրան որքան կարելի է կատարեալ կերպով, վստահութիւն տուէք գիւղացուն, որ նա կարող է պաշտպանել իրան աջող կերպով և այն ժամանակ գիւղացին առանց պատուէրի էլ ինքը կը շտապի իր գիւղը վերադառնալու։

Ի՞նչ նշանակութիւն կարող են ունենալ սպառնալիքները, երբ մարդիկ թողել են գիւղը և հնարաւորութիւն չունեն նորից երևալու այդ գիւղում։

Եւ որքան ծանր է լսել, որ սպառնալիքի նիւթ են դարձել նոր գաղթականները։ Մի՞թէ կարելի է նոր գաղթականների անուն տալ այնտեղ, ուր կոտորածների պատճառով մարդիկ ստիպված են թողնել իրանց տուն ու տեղը և հեռանալ այն տեղից։

Ծանր է լսել։

Բարոյական մթնոլորտը խեղդող է դառնում։

V

Ի՞նչ անել։

Աւելի մօտ լինել իրականութեան և աշխատել լսելու բուն ժողովրդի ձայնը։

Ի՞նչ է ասում ժողովուրդը։

Ասենք այն, ինչ որ մենք գիտենք։

—Փոխանակութիւն արէք մեր հողերի վերաբերութեամբ, ասում է ժողովուրդը։ Փոխանակութիւն այն մարդուն, որ մեզ հայերիս տուէք այն թուրքերի հողերը, որոնք ապրում են հայկական շրջանները, իսկ մեր հողերն էլ տուէք այնտեղի թուրքերին։

Նոյն տեսակ առաջարկութիւններ լսվում են և թուրքերի կողմից։

Մենք կարող ենք շատ և շատ ցաւել, որ հայ-թուրքական յարաբերութիւնները այդքան սուր կերպարանք ստացան, որ հայ և թուրք տարրերի բնակութեան տեղերը և գործունէութեան ծաւալը սահմանափակ շրջանների մէջ են դրվում, բայց ի՞նչ կարող ենք անել այժմ, երբ դժոխային դաւի շնորհիւ մեր առաջ բացված տխուր իրականութիւնը ստեղծել է այնքան մեծ արգելքներ մեզ համար ապրելու խառն, ինչպէս ապրել ենք դարեր շարունակ։

Մեր դէմ լարած դաւադրութիւնը այնպիսի մեծ ծաւալ և ճիւղաւորութիւններ ստացաւ, որ հազիւ մենք այժմ նրան կարողանանք հաւատացումներով և երդումներով չեզոքացնել։ Առաջ եկան մասային շարժումներ, յուզվեցին ընած և մարած կրքեր, արթնացաւ գազանը մարդկանց մէջ, բորբոքվեց վրէժը և այժմ պէտք է խուսափել այն բոլորից, ինչ որ կարող է դարձեալ առիթ դառնալ նորանոր ընդհարումների համար։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ղազախ, փետրվարի 1-ին երեկոյեան ժամի 7 և 25 ր.

«Կրզանցիների մասին մօտ օրերս կարգադրութիւն է արված ազատել նրանց գերութիւնից։ Վաղը գնալու եմ Շամշադին»։

Բժ. Ակոբեան

—

Ղազախ, փետրվարի 1-ին ցերեկվայ ժամի 10 և 35 ր.

«Ղազախի գաւառում ապահովութիւն է։ Քարվանսարայի հայերը ազատ երթևեկում են Ղազախ։ Կրզանցիները ցրված ապրում են թուրքական գիւղերում, որովհետև իրանց տները քարուքանդ են արված։ Նրանց առաջարկված է 23-ին. ցանկացողները կարող են հեռանալ իրանց բնակավայրերից»։

Պօլիսթիկ Լէվիցկի

—

Երևան, 2 փետրվարի

Յունվարի լոյս 31-ի գիշերը Նախիջևանից 6 վերստ հեռու գէպի Զուղա յարձակում է գործված երկաթուղու շինութեան վրա և կողոպտված։ Երկու բանւոր վիրաւորված են։ Յարձակվող երկու թուրքերը ճանաչված են և բռնված։ Միւսներին որոնում է գաւառապետը։

—

Գանձակ, 2 փետրվարի

Պրիսաւը զեկուցանում է, որ յունվարի 25-ին, առաւօտեան 5 ժամին Զամբարաք և Բաշքենդ գիւղերի 500 զինված հայ ձիաւորներ յարձակվեցին թուրք Բանդեխլու գիւղի վրա և սկսեցին հրացաններ արձակել ամեն կողմից, բայց յետ մղվեցին։ Հայերը վերցնելով 35 գլուխ անասուններ յետ քաշվեցին։ Սպանվածների և վիրաւորների թիւը յայտնի չէ։

—

Ղշլաթան (Ղազախ գաւառ) փետրվարի 1-ին.

Զեղ յայտնի է, թէ ինչպէս յունվարի 26-ին սկսվեց կատաղի կռիւ և այդ կռւում սպանվեցին 4—6 հոգի, որոնց երկուսը Ղշլաթան գիւղցի էին (այն է Թէչկանց Յարութիւն և Սարբէգանց Մոսին), իսկ մէկը բաղանսեցի Գագնի Մելոյի ազգ. Հասանը. միւսները ուրիշ տեղերից։ Այդ օրը, յունվարի 26-ը, դարձաւ բաղանսեցիների և զօշլաթանցիների համար սև օր, գիւղական սգի օր։

Այդ օրը կարծես թէ մի ամպ տարածեց Հարսնաքարա և ս. Նշանի գագաթին։ Տարբեցին մօտիկի և բերդանի հրացանները. օդը որոտաց խրախուսիչ ձայնով. հնչվեց և քաջ հերոս, առիւծ Շեխալու ոգեորող ձայնը։

Շփոթութիւն ընկաւ Զօշլաթան, Բաղանիս և մօտիկ հայաբնակ գիւղերը. մի կողմից հրացանների ձայները, միւս կողմից երեխաների լացն ու ճիչը, մարդկանց աղաղակն ու կանանց սուգը, իսկ միւս կողմից այն անմոռանալի հերոսների սպանումը։ Երկու հարիւն Բ. և Ղ. գիւղերի մէջ ողբերգական դաշնակցութիւն և ձայնակցութիւն կային։ Սպանվածների մայրերի սուգն ու լացը սրտեր էին պատռում, բոլոր գիւղը ողբում էր նրանց կորստի պատճառով։ Նոյնպէս ողբում էին յաղթանդամ ու կորիճ Մոսէսի, Հասանի վրա։ Վերջինիս հայրը զրկված էր իր աչքերից և յոյսը դրել էր որդու վրա թէ այսուհետև նա կարող է պահպանել իրան. բայց չէր իմանում թէ նա կարող է այդպէս նահատակվել։

Երբ որ մեր տղերանցը սպանում են, 5-ի մարմինները գտնում են, իսկ Մոսէսին չեն գտնում. յայտնի չէ թէ որտեղ է մարմինը։

Տեղ.

—

Նուշի, փետրվարի 2-ին

Գիներալ Գօլօշչապովը ներկայումս գտնվում է Ղանքէնդ աւանում։ Գիներալի հրամանով այդտեղ ռմբակոծութեան է ենթարկվել Տ. Մելքումեանցի տունը։ Տեղացիները զինաթափ են արված։ Ձերբակալված են մի քանի հայեր։

Գիներալի ջանքերի շնորհիւ հաշտութիւն կայանալով, թուրքերը նորից շարունակում են Եւլախ-Նուշի խճուղու վրա խախտել ամենքիս համար ցանկալի խաղաղութիւնը։ Եւլախ և Քօշաբլի կայարանների մէջտեղում թուրքերը հրացան են արձակել մի քանի կօզակների վրա և զոհացել մի ճանապարհորդի իրերով լիքը զամբիւղը։

Գիներալ Գօլօշչապովը այդ մասին Ղանքէնդ աւանից հեռագրելով Նուշու քաղաքագլխին, հեռագրի մէջ ասում է, որ ինքը գնում է խաղաղութիւնը խանգարող այդ թուրքերին պատժելու և մի և նոյն ժամանակ աւելացնում է, որ այնտեղից Նուշի վերադառնալուց՝ բոլոր շուշեցիներին պէտք է դնեմ թափ անէ, իսկ զէնքը չը ուղղեր ամենախիստ կերպով պէտք է պատժվեն։

Գիներալի ձեռք առած ազդու միջոցները՝ խաղաղութիւնը դրականապէս վերականգնելու համար՝ շուշեցի հայերիս ուրախացում են, սակայն մի տխուր հանգամանք ամենքիս տխրեցնում է։ Այդ այն է, որ ձերբակալվում և բանտարկվում են մեծ մասամբ հայերը, այն էլ միանգամայն անմեղ մարդիկ, իսկ խառնակութիւնների և կոտորածների պատասխանատու Զաֆար-բէկները, Սալիմ-բէկները, Հուսէյին-աղաները և այլն, մնում են առանց պատժի...

Ռմբակոծվում են հայկական գիւղերը, իսկ աղաները որդ Աղդամը, Սէյիդլուն, Մուրադ-բէկլուն, Զէբրայիլը, Աղջաբադին մնում են առանց ուշադրութեան, առանց արժանաւոր պատժի...

Վերոյիշեալ անձնաւորութիւնների և վայրերի անպատիժ մնալը մենք վերագրում ենք թիւրիմացութեան, ի նկատի ունենալով գիներալ Գօլօշչապովի անտեղեակ լինելը՝ և յոյս ունենք, որ գիներալը կը վերացնէ այդ թիւրիմացութիւնները, կորոնէ իսկական յանցաւորներին, լինեն նրանք հայ թէ թուրք, մեզ համար մի և նոյն է, և կը պատժէ նրանց ըստ արժանւոյն։

Կրկնում ենք, հարկաւոր է որոնել իսկական յանցաւորներին և միայն նրանց պատժել, այլապէս, հայ անմեղ անձնաւորութիւններին ձերբակալելով, հայկական անմեղ գիւղերը թնդանօթի կապելով և մխժամանակ անպատիժ թողնելով աւազակաբարոյ թուրք բէկերին և թուրք գիւղերը,—հազիւ թէ կարելի լինի դրականապէս վերականգնել ամենքիս համար ցանկալի խաղաղութիւնը։

Ա. Յ.

—

Շուլավեր, 2 փետրվարի.

Այսօր լուր հասաւ Շուլավեր, թէ Քիւրփլու գիւղում, որը գտնվում է Բօրչալուի գաւառում և սահմանակից Ղազախին, արդէն կռիւ է սկսված։

Իսկոյն իրարանցում է ընկնում գիւղը. բոլորը պատրաստվում են, իսկ գիրքերը բռնվում են խարերով։

Առհասարակ այս քանի օրերս չարաբաստ լուրեր ենք լսում, որ իբր թէ թուրքերը պատրաստվում են հայերի վրա արշաւելու, և այլն և այլն։ Իսկապէս այս կողմերում վատ հոտ է փչում և Տեմենենք ինչ կը լինի վերջը։

Ուս. Ա. Բաղդասարեան

—

Մի երիտասարդ, երէկ, փետրվարի 3-ին մտնելով մեր խմբագրատուն, պատմեց հետևեալը.

Գանձակից մօտ 5 վերստ հեռաւորութեան վրա գտնվում է Գօրչաքովի կայարանը։ Վերջին մէկ ու կէս տարվայ ընթացքում ես այնտեղ կառավարիչ էի։ Երբ սկսվեցին մեր կողմերում խառնակութիւններ, ես հեռացայ կայարանից դէպի Սղնախ։

Ինձ այնուհետև տեղեկութիւն հասաւ, որ թուրքերը եկել են կայարանը լինած որոնելու և չը գտնելով հեռացել են, կողոպտելով իմ սենեակների մէջ եղած իրերը։

Այս օրերս սակայն ստացայ մի ծրար՝ ինձ որոնող և գուցէ սպանել ցանկացողներից։ Դա մի շատ օտարոտի ծրար էր։

Ծրարը պարունակում էր իմ և կնոջս լուսանկարը և մի փոքրիկ նամակ, որի բովանդակութիւնն այն էր, թէ իմ բարկն է, որ ինձ տանը չեն գտել և ինձ չեն վնասել։ Ինչ վերաբերում է լուսանկարներին, նրանք գանակով կամ սրով խաղխվված էին գանազան ուղղութիւններով։

Նամակը և լուսանկարը պահել եմ թէ իբրև տխուր և ծանր յիշատակ մեր դժոխային օրերի և թէ իբրև մի վաւերաթուղթ անհրաժեշտ դէպքում, օրինակ, երբ հարկաւոր լինի պահանջ ներկայացվող գողացած իրերի մասին, որոնց արժէքը մօտ 4000 ռուբլի է։

Պատմող պարոնը Մարտին Աբեանց, ցոյց տուեց մեզ նամակը և լուսանկարը։

ԴԷՊԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

—

Բուենոս Այրէս 2 փետրվարի.

«Մի քանի գիւղերի ազգաբնակութիւնը հասարակական արձանագրութիւններ կազմեց ընդհանուր ծիսական ժողովում շտապով հաւաքել դրամական տուրքերը և հարկերը, համաձայն գեներալ-նահանգապետի կարգադրութեան։ («Հ. Գ.»)

—

Բուենոս Այրէս 2 փետրվարի.

Շօրապանեան գաւառի Սագանօ գիւղում մի քանի տասնեակ զինված մարդիկ զայլկերով կրակ արին ազնուական Մդեվանի տան վրա։ (Ռ. Հ. Գ.)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Մեծ-Փարկիթ գիւղ (Շիրակի գաւառ) յունվարի 30-ին։ Այս մի ամբողջ տարի է ինչ շարունակվում է հայ-թրքական կռտորածը և աւերմունքը, իսկ մեր շրջանը մինչև այժմ ազատ է մնացել այդ ահեղ թուրքերից։ Բայց ուստի, որ երկար չը պիտի տևի այդ ցանկալի խաղաղութիւնը։

Ներկայ յունվարի 29-ի օրը՝ մեր դրացի Աբրշակ Զարգանեանը, իր որդի Ալէքսանդրի հետ, սաստկով գնում են Զարիշդաղ շրջանի Թափաճիկ թուրք գիւղը մի կով գնելու նպատակով։ Վեր են գալիս իրանց նախածանօթ քիւրդ Ամօի դուռը, արձակում են լծած ձիաները և ուզում են տանել ախոռը։ Այդ ժամանակ յիշեալ Ամօի տանիքի վրա հաւաքված են լինում մի խումբ թուրքեր, որոնց թում լինում է և նոյն շրջանի, Բուրջալի գիւղացի յայտնի աւազակապետ Աբասի ընկերը, Բուրջէն։

Շտապով իջնում է տանիքից և հազար ու մի տեսակ հայհոյանքներ թափելով միամիտ հայերի գլխին, սկսում է խուզարկել նախ Ալէքսանդրին, ապա ծերունի Արշակին։ Խուզարկութեան ժամանակ Արշակի կնատակի գրպանում նկատում է մի ինչ որ բան (որտեղ սովորաբար մեր ժողովուրդը պահում է իր փողերը)։

—Ինչ է սա, բարկացած հարցնում է սրիկան։

—Ոչինչ, պատասխանում է շշկլված ծերունին պինդ բռնելով գրպանը,—ոչինչ, աղա ջան... ես գէնք չունեմ։

Այդ մինչոյն բօպէին դուրս է գալիս տան տերը—Ամօն, տեսնում է իր ծանօթի հետ կատարվող գործը, մինչամուտ է սրիկայ Բուրջալին, որ խնայէ իր մտերմին։—Շէյթան քիւրդ, չը գիտես, որ հիմա գեաւուրներին հիւր ընդունելու իրաւունք չկայ, եթէ միւս անգամ յանդգնես գեաւուրներին տուն թողնելու քեզ, մաս-մաս կանենք. հեռացիր այստեղից, գիւաւր, քանի սաղ ես։

Բուրջէն հեռանում է։ Բարեսիրա Ամօն սրիկայի ձեռքից ազատում է իրան շատ անգամ բարիք անող հային և թոյլ չէ տալիս, որ գիւղում մնայ, որովհետև մնալը երկուսի համար վտանգաւոր է։

Ծերունի Արշակը և իր որդին վերադարձան գիւղը մահից ազատված։

Դէպքի մասին գանգատվեցինք մեր գիւղի տանուտէրին Դավիշին (գիւղի բնակիչների կէսը հայեր են, կէսը թուրքեր)։ Անմիջապէս խառն ժողով անել տուինք, պահանջեցինք թուրքերից, որ միջոցներ ձեռք առնեն յանցաւորին պատժելու համար, որ թոյլ չը տան միւս անգամ, որ կրկնվի այդպիսի անախորժ դէպք, որից շուտով կարող է կոտորած առաջանալ։

Մեր պահանջն էր, որ երեք հայ և երեք թուրք գնան դէպքը կատարված գիւղը, վեր առնեն ականատեսներին և դիմեն գաւառապետին ու միասին պահանջեն գաւառապետից, որ յանցաւորին հրապարակով պատժեն։

Մեր դրացի թուրքերը խոյս տուին, հաստատ հաւատացնելով, որ առաջիկայ ուրբաթ օրը, Զարիշդաղ շրջանի բոլոր թուրքերը ժողով են ունենալու նոյն շրջանի Վանաղիա կամ Զաղարա գիւղերում. ասացինք. «մենք էս կը գնանք այն տեղ, կը խնդրենք նրանց, որ ձեզ վնաս չը տան իբրև մեր դրացիները։

Ի հարկ է մենք այդպէս հեղնեցինք նրա համար, որ մեր պահանջը ընդհանուրի խաղաղութեան համար էր, բայց նրանք ապահովում են մեզ Փարկիթցիներիս միայն։ Ի՞նչ ժողով են ունենալու նրանք այդ գիւղերում և ինչ ծրագրեր են կազմելու այդ ժողովում, դա թողնում ենք ընթերցողի զուսակութեանը՝

Ցանկալի էր, որ կառավարութիւնը միջոցներ ձեռք առնէր սասանեցնելու Աբասների և Բուրջաները նման սրիկաներին, որոնք ամեն մի քայլափոխում ափի են տալիս խռովելու մեր շրջանի անդորրութիւնը, և շուտով կոտորած առաջացնելու։

Տեղացի

ՄԱՄՈՒԼ

—

Նուաճող, յաղթող պետութիւնը ինչ դիրք պէտք է բռնէ նուաճված, պարտված երկրների վերաբերմամբ—ահա մի հարց, որ յաճախ արծարծվում և քննվում է այժմ եւրոպական մամուլի մէջ և նոյն իսկ պետական անձանց ճառերի առարկայ է դարձել։

Անգլիայի ֆինանսների մինիստր Ասկվիս, ինչպէս կարդում ենք «Рус. Вѣд.»-ում նոր-երս մի վերին ատիճանի ուշագրաւ ճառ արտասանեց իր մայրենի քաղաքում այն մասին, թէ ինչ շաղկապներով մի օտար ազգ կարող է կապվել պետութեան հետ, թէ կառավարութիւնը ինչպէս պէտք է վերաբերվի ծայրահեղ կուսակցութիւններին։ Այդ կէտի վերաբերմամբ նա գծագրեց և անգլիական նոր մինիստրութեան ծրագիրը։

Ամենից առաջ նա շօշափեց Տրանսվաալը խաղաղացնելու անհրաժեշտութիւնը։ Տեսնենք ինչ մտքից է նա առաջարկում դրա համար։ Նա առաջարկում է ամենալայն ինքնավարութիւն պատասխանատու մինիստրութեամբ։ Օտար ազգութիւնները յարում են պետութեան միայն լայն ազատութեան միջոցով։ Իսկ միակ եղանակը՝ ընտելացնել մարդկանց այդ ազատութեան—դարձեալ ազատութիւնն է։ «Անգլիական կառավարութիւնը, յայտնեց Ասկվիս, մտադիր է որքան կարելի է շուտ տալ Տրանսվաալին ամենալայն ինքնավարութիւն, պատասխանատու մինիստրութեամբ։ Նա խորապէս համոզված է, որ Հարաւային Ամերիկայում այդ միջոցը կը տայ նոյնպիսի բարի հետևանքներ, ինչպէս և Կանադայում։ Լայն ինքնավարութիւնը կը կոկէ ցեղական խորթութիւնը և կը միացնէ բօէրներին ու անգլիացիներին»։

Ամենքը, ի հարկէ, գիտեն, որ 70 տարի առաջ Կանադայում ֆրանսիական ազգաբնակութիւնը ապատամբութիւն բարձրացրեց անգլիացիների դէմ։ Արդ, ինչ արաւ կառավարութիւնը։ Նա չուղարկեց զօրքեր՝ հրամանով կախել, գնդահակահարել և այրել, այլ ուղարկեց խաղաղարար, որ տուեց ապատամբված ժողովրդին ամենալայն ազատութիւն։ Եւ անգլիացիները չը զղջացին։ Ես մի քանի տող կը բերեմ նոր լոյս տեսած մի գրքից «An Empire of mixed Tints», որ գրել է մի վառ իմպերիալիստ՝ Ֆիլջէսը։

«Կանադա ներկայացնում է ամենազարմացուցիչ օրինակը, թէ ինչպէս գանազան ազգերը, երբ վայելում են լայն ազատութիւն, կարող են ձուլվել, ի մի ամուր, հզօր կամաւոր դաշնակցութիւն։ Ֆրանսիական ժողովրդի ամենաազատ, երջանիկ, գոհ և ամենաքիչ հարկ վճարող այդ մասը, իր պետ՝ և համարում ոչ թէ նախագահ Լուբէին, այլ Էդուարդ VII թագաւորին։ Եւ եթէ այդ մի ուկէս միլիոն ժողովրդին առաջարկեն ընտրել Ֆրանսիան և Կանադան, նա, ի հարկէ, կընտրէ Կանադան։ Կանադայում ֆրանսիացիները աւելի մեծ ազատութիւն են վայելում, քան Ֆրանսիայում։ Նրանք աւելի քիչ հարկ են վճարում։ Նրանք զինուորական ծառայութիւն չունեն։ Ֆրանսիացիները Կանադայում ունեն իրանց օրէնքները, իրանց գրականութիւնը, իրանց դպրոցները և իրանց պարլամենտը։ Նրանք իրանք են որոշում իրանց հարկերը»։

Կանադայի այժմեան մինիստր-նախագահը, Լօրիէ—ֆրանսիացի է, բայց դա չէ արգելում նրան ամենից առաջ լինել կանադացի։

Արդ, երբ Ասկվիսը, որ յայտնի է, իբրև մի շատ խելօք, բայց չը մարդ, իբրև գործնական, առողջ մտքի տէր անգլիացի, խօսում է Տրանսվաալի խաղաղացման մասին լայն ինքնավարութեան միջոցով, ուրեմն նա ունի հաստատ և փորձված միջոց։ Եւ վատ չէր լինի, եթէ Վիատէի մինիստրութիւնը մի անգամ ընդ միշտ համոզվէր, թէ Ռուսաստանի ձեռքով նուաճված երկրների, օրինակ, Կովկասի խաղաղացման ամենաապա-

հով միջոցը կը լինէր տալ այդ երկրներին ամենայն ինքնավարական ազատութիւն։

*

Նոյն Ակվիլոյ իր ճառի մէջ ողջունում է բանւորական կուսակցութեան մուտ գործելը քաղաքական գործունէութեան մէջ։ Մինիստրը բացարձակապէս համաձայն չէ նրանց հետ, որոնք աշխատում էին մի ժամանակ զարհուրեցնել ժողովուրդը անիշխանութեան և յեղափոխութեան ուրուականով։ Նա կարծում է, որ արմատական մինիստրութիւնը կարող է հեշտութեամբ աշխատել միաբան շատ կէտերի մէջ բանւորական կուսակցութեան մեծամասնութեան հետ։

«Եթէ երկրում—ասաց նա,—կան «անհաշտներ», որոնք ծայրահեղ հայեացք են դատում, ապա լաւ է, որ այդ մարդիկ կարողանան արտայայտվել պարլամենտում բաց, համարձակ. ազատ վիճաբանութիւնները և մտքերի փոխանակութիւնը պարզում են միտքը և սթափեցնում են։ Երկրի հանգստութեան համար աւելի օգտակար է, որ ծայրահեղ մտքերը արտայայտվեն պարլամենտում յայտնաբար, քան թէ ագիտացիան ընդունէ գրժգոհ, ծածուկ բնաւորութիւն։ Բրիտանական պարլամենտը—ամենազգաստ է. թող ուրեմն նա երկրի հայեացքների բոլոր գունաւորութիւնների արտայայտիչ հանդիսանայ։ Լայն ազատութիւնը աւելի ամուր և կայուն կը դարձնէ դեմոկրատական կառավարութիւնը։

*

Յայտնի ռուս յեղափոխական գործիչ Պլեխանովի հրատարակած «Օսցիալ-Դեմոկրատի Օրագիր» (Дневникъ Соціалъ-Демократа) հանդէսի № 4-ը, ինչպէս կարդում ենք «Рус. Вѣд.» մէջ, սաստիկ ուշագրաւ է։ Ոչ որ չէ կարող ասել, թէ Պլեխանովը ևս Վիտալէի զորձակցներից է, և սակայն «Օրագրի» հեղինակը ահա ինչ է ասում.

«Ընդհանուր քաղաքական գործադուլը—կամ այնպիսի եղանակ չէ, որին կարելի լինի դիմել գրեթէ ամեն րոպէ։ Պէտք է, վերջապէս, հասկանալ, որ մենք պէտք է ծանգ համարենք ոչ—պրոլետարական ընդդիմադիր կուսակցութիւնների աջակցութիւնը և ոչ լաց մղել նրանց միջանից անտակտ վարմունքներով։ Արևմուտքում, պրոլետարիատը սոփոված է յոյսը դնել իր սեպական այժերի վրա. նա մեկուսացած է։ Իսկ մեր պրոլետարիատը... գնա կարող է գործունեայ օգնութիւն գտնել մի քանի ուրիշ դասակարգերի կողմից։ Պրոլետարիատի սոցիալիստական դասակարգութեան համար բոլորովին բնական չէ ի դէպ և յանդէպ հայհոյել բուրժուազիային»։

Բանւորական շարժման գեղակից տարբերի գործն է, Պլեխանովի կարծիքով, «ցոյց տալ պրոլետարիատին նրա պահանջները, բացատրելու համար նրան այն խաղի վտանգաւորութիւնը, որ կոչվում է «սպառազինած ապատմբութիւն»։ Բիւրօկրատիան սիրում է կրկնել, թէ «ամեն բան բարեյաջող է»։ Զը պէտք է նմանվել նրան։

*

Յայտնի է, որ ֆրանսիական մամուլը, նոյն իսկ չափաւոր հանրապետականները պնդում են, թէ Ֆրանսիան որ և է դէպքում չը պէտք է մասնակցէ Ռուսաստանի արտաքսմանական փոխառութիւններին, մինչև որ Ռուսաստանում անկեղծօրէն չի մտցվի սահմանադրութիւն և չի գումարվի Պետական Դուման։

Նոյն միտքը կրկնում է և «La Revue des revues» ամսագիրը, որ «Ֆրանսիան և ռուսական ֆինանսներ» յօդուածում ասում է.

«Ռուսաց կառավարութիւնը գտնվում է ներկայումս բոլորովին բարեյաջող պայմաններում, իր ժողովրդին ամենայն ազատութիւն տալու համար։ Յաղթելով յեղափոխութեան, նա կարող է յայտարարել իրան առատաձեռն և բարեհամ դէպի ժողովրդի մասան, որը անհամբերութեամբ սպասում է նրա խոստումների կատարման։ Ամենափոքր յապաղումն կը նշանակէ վերադառնալ դէպի անիշխանութիւն։ Հէնց որ Ռուսաստանում կիրեայ իսկական ներկայացուցչական կառավարութիւն և ռուսական բիւջէոյ կենտրոնի կենթարկվի ժողովրդական ներկայացուցիչների կողմից, Ֆրանսիան ուրախութեամբ կը վստահանայ նրան իր խնայողութիւնները»։

Մինչ այդ հեղինակը «յանցանք» է համարում խորհուրդ տալ ֆրանսիական ժողովրդին ձգել իր միջոցները «անյատակ ռուսական անդունդը»։

ԷԼԻ ՀԻՆ ԴԱՐՄԱՆԸ

Զը գիտենք, այսօր էլ ինչ դժբախտութիւն է պակասում արնաքամ Կովկասին, որպէս զի նրանում ապրող ազգութիւնները վերջապէս հասկանան իրանց չարն ու բարին։ Էլ մնց դաս, զարհուրելի դաս։ Բայց...

Նոյն իսկ այս մայր, յուսահատական օրերում, մեր երկրի այս անլուր ու անօրինակ թշուառութեան միջոցին, ազգայնական թըշնամութիւնը չէ կարողանում գտնէ առ ժամանակ, գտնէ ամաչելով ընդհանուր վշից ու տառապանքից, մոռանալ իր հին արհեստը։ Նորից խօսել նրա մասին, նորից բաց անել հին վէրքերը...

Այո, դժբախտ, անիծեալ մի անհրաժեշտութիւն է դա, որից մենք չը պիտի ազատվենք, քանի որ կոյր ազգասիրութիւնը կը շարունակէ իր թունաւոր գոյութիւնը ցուցադրել հրապարակում ամեն մի ժամանակ, ամեն մի դէպքում։

Մենք ասնդկում ենք փոխադարձ անվստահութիւնից, չարակամութիւնից, ատելութիւնից։ Մեր ասնդնքները արդէն մուխի թանձր սիներով հասել են երկինք։ Բայց կայ ապագայ, պիտի գան աւելի երջանիկ սերունդներ, որոնց դատաստանին էլ մենք պիտի թողնենք մեր վշերը։ Արտասուքի այս օրերում մենք քար կը սեղմենք մեր սրտին, կը խօսենք այդ հին վէրքերի մասին, որպէս զի գալոց սերունդները տեսնեն թէ ինչ ու ինչ հանդամանքներից էր հիւսվում մեր այսօրվայ անյատակ դժբախտութիւնը։

Թող տեսնեն նրանք, որ նոյն իսկ այսպիսի խեղդող ժամանակ մարդիկ կան, որոնք ախորժակ ունեն՝ իրանց կրակված տան աշէն սրտի փղձուկ հանել, իրանց նոյնպէս դժբախտ, նոյնպէս անօգնական հարևանին աքացի տալով։

—

Այդպիսի ախորժակ երբէք չէ պատահել վրաց ազգանդաւոր բանաստեղծ Ակակի Ծերեթելին։ Դա հինաւուրց մի հայատեաց է, բազմաթիւ մեղքերով։ Կարելի է ասել, որ պ. բանաստեղծը նախահայր է մի տիպի, որ այսօր շատ է տարածված վրաց բուրժուազիայի և առաւելապէս ազգատացած կալուածատէրերի մէջ։

Մի ժամանակ, երբ հայերին ցեխոտելը հարմարվում էր հայրենասիրական մեծ առաքինութիւն, որ ամեն կերպ խրախուսվում էր Գօլիցինի և Վէլիչկոյի հովանու տակ, այդ տիպերը շատ արձակ-համարձակ էին գործում ոչ միայն խօսքով, այլ և գրչով։ Օրինակ, նոյն այդ միջոցներին այս իսկ պ. Ծերեթելին գրում էր և ամենքը կարծում էին թէ Ուվիլս-Յիխէի վրացիներին թունաւորելով բնաջինջ են արել հայերը իրանց հոգևորականների ներշնչմամբ ու իրանք գրաւել են վրացական հողերը։ Եւ վրաց մամուլի մէջ ամեն կերպով արծարծում էին, բորբոքում էին բանաստեղծի այդ մեծ դիւցը։

Չանց ենք անում ալեզարդ պառնասականի միւս բազմաթիւ յայտնագործութիւնները, որոնց դէմ գուրս եկաւ պրոֆէսոր Մառ Ջախջախիչ փաստերով։

Այո, ազգամոլութեան, ատելութիւնների, սառութիւնների ոսկեդար էր մի քանի տարի առաջ։ Անցաւ այդ ոսկեդարը, եկան ազատագրութեան ժամանակները, որոնք յետ քշեցին, փառաբերի արին Ակակի Ծերեթելիների, իշխան Ճամֆաղաձէների սերունդը։ Այլ ևս գերանք չէին առաջին չուրթակարները վրաց հասարակական կեանքի մէջ։ «Ազնիւ» արեան իրաւունքով տիրող ձրիակերների դէմ բարձրացաւ դարերից է վեր հարատևողով ժողովրդի գոռ բողոքը։ Եւ այնուհետև ֆէօդալներին ճռում էր իրանց հին արհեստը գործածել կամացուկ, քաջշվելով, կամ մեծաւորների ընդունարաններում մանը չարախօսութիւններ շշնջալով, կամ խաղաղարարական խմբեր ուղարկելով Բօրչալու, կամ թէ մամուլի մէջ վախկոտ, կիսատ-պռատ ակնարկներ նետելով դէպի հայերը։

Բաղմաթիւ փաստերը չափազանց թարմ են և կարիք չը կայ նրանց կրկնելու։ Առաջ ազգայնամոլական թոյնը պատուաստում էին բացարձակ, հպարտ ճակատով, դիւցազնօրէն։ Այժմ այդ քաջամարտիկները այնքան են կուչ եկել, որ դարձել են փոխուկներով, ակնարկներով թունաւորողներ։

Պ. Ակակի Ծերեթելին նորերս, մի քանի օր առաջ, այդպիսի մի փոքր արաւ «Кавказъ» լրագրում։

Դրա մասին էլ կը խօսենք մենք։

—

Յայտնի է որ թաթարական արշաւանքը բացառապէս հայերի դէմ է հանված։ Անդրկովկասցի չիա թուրքը հային մորթելու արտօնութիւնն է յանձն առել և ուրիշ ոչ մի ազգութեան հետ գործ չունի, այսինքն սրածութեան, գազանութեան գործ։ Վրաց ինտելիգենցիան թաթարական արշաւանքի սկզբից շարունակ կրկնում էր, թէ թուրքերը և վրացիները միշտ և ամեն ժամանակ բարի գրացիներ են եղել, թշնամութիւն իրար հետ չեն ունեցել, հեռաւոր և իրար հետ ընդհարվելու ոչինչ առիթ չունեն։

Բաւական չը համարվելով այդ, անցեալ ամառ Թիֆլիսում հաւաքված թուրք բէկերը վրաց ազնուականութեան հետ գրաւոր եղբայրական պայման կապեցին։ «Մշակի» մէջ այդ իսկ ժամանակ մենք ողջունեցինք այդ եղբայրական դաշնակցութիւնը, որ խաղաղ ապրուստի և առաջադիմութեան նպատակն ունէր։ Մենք շնորհեցինք մանաւանդ այն ոգեորիչ հանդամանքը, որ այդ ժողովում մահմեդական վրացիների ներկայացուցիչները վերկացին, որ իրանք վրացի են և իրանց այլազգի ազգակիցների հետ ձեռք ձեռքի տուած կը գնան։ Այդ երևոյթը մենք համարեցինք յաղթական այն գաղափարի, որին երկրպագում էինք տասնեակ տարիների ընթացքում։

Արեան, կրծանման պաշտամունք երբէք չէ եղել հայի մէջ. ինքն իրան, իր պատիւը, իր ընտանիքը պաշտպանելու գործի մէջ նա շատ անգամ յուսահատական ճիգեր, նոյն իսկ «խենթ տրամադրութիւն» է ցոյց տուել, բայց այդ տիպը անհրաժեշտութիւնից դուրս նրա պաշտամունքը, նրա անլուսա ազօթքը եղել է աշխարհի խաղաղութիւն և բարեշնութիւն։ Այստեղից արդէն շատ պարզ է, որ թուրք-վրացական ֆէօդալական դաշնակցութիւնը յանուն եղբայրութեան հայերի համար միայն ցանկալի էր, քանի որ իրանք, հայերն էլ, ամեն ջանք գործ էին դնում այդ տեսակ մի դաշնակցութիւն ստեղծել իրանց և թուրքերի մէջ, թէև ոչինչ աջողութիւն չունեցան։ Մենք ուրախացինք, մինչև այսօր էլ մենք դիմադրում են...

Սակայն վերոյիշեալ տիպի վրաց ազգայնամոլները արթուն են և ամեն մի յարմար առիթով պատրաստ են խայթել իրանց վաղմի ատելութեան առարկայ հայերին։

Ցիրեցնենք մի թարմ փաստ։

Անցեալ աշնան «Новости» լրագրում տըպվեց մի յօդուած, որի մէջ ասված էր թէ վրաց ֆէդերալիստ յեղափոխականները միացել են թուրք համխալամականների հետ՝ Թուստաստանից բաժանվելու համար։ Ամենից առաջ այդ յօդուածի դէմ բողոքը հայ մամուլն էր։ Բայց Բաթումից մի խումբ վրացիներ հեռագիր ուղարկեցին մայրաքաղաքի լրագիրներին, հերքեցին այդ սուտ տեղեկութիւնը, բոլորովին պարզ, բոլորովին հասկանալի ակնարկներով հասկացրին, թէ այդ լուրի հեղինակները հայերն են։ Այդ հեռագիրը յաղթական ապլոմբով տպեցին և վրաց լրագիրները։

Սակայն «Новости»-ի թղթակիցը բաց աբաւ իր անունը և երևաց, որ նա ռուս է։ Յայտնեց որ իր հաղորդած տեղեկութիւնը նա ստացել է ռուսաց բիւրօկրատական շրջաններից։ Իսկ Բաթումի վրացիները լռեցին, ձեռնու հասարեցին չը յայտնել որ իրանք ըզպարել են իրանց հարևան հայերին։ Ակնարկներով թունաւորողները հասան իրանց նպատակին։ Նրանց հնարատութիւն չէր հարկաւոր, այլ թունաւորելու մի առիթ։

Անցեալներում Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնը հաղորդեց Բաթումից թէ մահմեդականների և վրացիների յարաբերութիւնը լարված է և սպասվում է ընդհարում։

Բարեբախտաբար, լուրը չը հաստատվեց։

Ահա այդ առիթով պ. Ակակի Ծերեթելին տըպեց «Кавказъ» լրագրի № 22-ի շմջմ մի յօդուած՝ «Վրացիների և մահմեդականների փոխադարձ յարաբերութիւնները» վերնագրով։ Այդտեղ նա ասում է թէ այդ յարաբերութիւնները միշտ եղել են բարեկամական, բայց թ հարկէ, չէ մոռանում միաժամանակ և թուաւորել մարդկանց՝ հայերի դէմ ուղղած ակնարկներով։

Երբ մի մարդ քաջութիւն չէ ունենում պարզ ու որոշ գրել ինչ կարծում է, նշանակում է որ նրա խիղճը շատ էլ մաքուր չէ։ Եւ մերկացնել այդպիսիներին — հարկաւոր է անպատճառ։

Դիմենք պ. բանաստեղծի թունաւորիչ ակնարկներին։

—

Յօդուածը սկսվում է այսպէս.

«Երբ 1795 թուականին Ագա-Մոհամմէդ-խանը պաշարեց Թիֆլիսը և վրաց Հերակլ թագաւորը, նոյնիսկ ոչ միայն Թիֆլիսի մէլիքների, այլ և իր մերձաւոր զօրավարների դաւանանուրեան*), հարկադրված եղաւ դուրս գալ պարսիկների ահագին բանակի դէմ միայն 8000 զրքով. վրացիների համար կուսների թիւում կային զաղախ—բշարուեցիներ»։

Պատմութեան անտեղեակ մարդը այս կտորի մէջ չի նկատի թոյնի տեղը։ Ուստի մի փոքր ծանօթութիւն Թիֆլիսի մասին։ Պ. Ծերեթելի հետ մենք կը խօսենք այնպիսի աղբիւրների միջոցով, որոնց վերաբերմամբ նա չէ կարող որ և է կասկած ունենալ։

Վրաց յայտնի հնագէտ Պլատոն Իոսելիանին գրում է. «Թիֆլիսի մօտաքաղները (պատցաւորը քաղաքացիների պէս մի բան) կազմվել են ամեն տեսակ ազգերից։ «Ամենը» արեան իրաւունքով տիրող ձրիակերների դէմ բարձրացաւ դարերից է վեր հարատևողով ժողովրդի գոռ բողոքը։ Եւ այնուհետև ֆէօդալներին ճռում էր իրանց հին արհեստը գործածել կամացուկ, քաջշվելով, կամ մեծաւորների ընդունարաններում մանը չարախօսութիւններ շշնջալով, կամ խաղաղարարական խմբեր ուղարկելով Բօրչալու, կամ թէ մամուլի մէջ վախկոտ, կիսատ-պռատ ակնարկներ նետելով դէպի հայերը։

Բաղմաթիւ փաստերը չափազանց թարմ են և կարիք չը կայ նրանց կրկնելու։ Առաջ ազգայնամոլական թոյնը պատուաստում էին բացարձակ, հպարտ ճակատով, դիւցազնօրէն։ Այժմ այդ քաջամարտիկները այնքան են կուչ եկել, որ դարձել են փոխուկներով, ակնարկներով թունաւորողներ։

Պ. Ակակի Ծերեթելին նորերս, մի քանի օր առաջ, այդպիսի մի փոքր արաւ «Кавказъ» լրագրում։

Դրա մասին էլ կը խօսենք մենք։

—

Յայտնի է որ թաթարական արշաւանքը բացառապէս հայերի դէմ է հանված։ Անդրկովկասցի չիա թուրքը հային մոր

քերի անկեղծ թացող հաւատարիացութիւնների ներշնչմամբ աւելաւորը փոխադրելու միաքը թողեցին, և իրանք էլ համոզում էին իրանց ցեղակիցներին՝ յոռետեսներին չը տեղափոխել աւելաւորը հայկական մասը։ Պ. պ. Խաս-Մամէդօվը, Բաֆիբէգովը և նրանց միւս համախոհները ասում են, որ Թուրքերը սպառազինութեան հարցում կարճ ժամանակամիջոցում չէին կարող հասնել այնպիսի հետևանքների, որին հասել էին հայերը, այդ գործի համար աշխատելով 15 տարի շարունակ, յեղափոխական «Դաշնակցութիւն» կուսակցութեան ղեկավարութեամբ։ Ոչ ոք չի ժխտի, որ հայերը շատ վաղուց է, որ զէնք են ձեռք բերում։ Բայց մինչև հայատեաց Գօլիցինեան բէժիմի թագաւորելը մեր երկրում հայերի բոլոր զէնքերը բացառապէս յատկացվում էին Տաճկաստանի հայերի համար, որը և անյապաղ ասնում էին։ Այդ նպատակի համար հայերը զէնք էին ձեռք բերում ոչ միայն գնելով, այլ և հաւաքում էին Կովկասեան իրանց համազգիներից, այնպէս որ մի խումբ Թուրքերի ցուցմունքները Կովկասեան հայերի 15 տարի շարունակ զինվելու մասին, ոչ այլ ինչ են, եթէ ոչ միտումաւոր առասպել։

Իսկ իբրև ապացոյց Գանձակի Թուրքերի լաւ սպառազինութեան, հայերի հետ համեմատելով կարող է ծառայել գեներալ Տակայշուերի կարծիքը, որ յայտնել էր Թիֆլիսի դումայի պատգամաւորութեանը, թէ «Թուրքերը իրանց ձեռքի տակ ունէին 8000 հոգի զինված կամաւորներ»։ Վերոյիշեալ պատգամաւորութիւնը, որ անձամբ զեկուլ էր Թուրքերի զինված ոյժերը, հաւաստացնում էր Գանձակի հայերին «Թուրքական անգին ոյժերի մասին, որոնք լաւ զինված են, և որ հայերը իրանց ոյժերի մասին խիստ չափազանցացրած կարծիք ունեն»*)։

«Կաւկազի» յիշեալ նամակի հեղինակները պնդում են, որ Թուրքերը բոլորովին անաչառ էին նոյեմբերի 18-ի համար պատրաստվող Թուրք-հայկական կոտորածի մասին, բայց թող նրանք մտաբերեն թէ ինչպէս Գանձակի անցքերից մի քանի օր առաջ հայկական ջարդերի եկւոր պարագաները, որոնք առաջ եղել էին Շուշու և Զիլանշիրի գաւառներում, իշխանները «Ցնծարար» հիւրասնցում և ամեն օր կասկածելի խորհուրդներ էին ունենում, որոնց անբաժան ներկայ էին լինում Խաս-Մամէդօվը, Բաֆիբէգովը, տոտիկանապետ Հասանբէգօվը, Թուրք հասարակութեան զանազան ներկայացուցիչներ և նոյն իսկ Թուրք գիմնազիաներ։ Ինչը են կարծում պ. պ. Խաս-Մամէդօվը և Բաֆիբէգովը, որ Գանձակի կոտորածը տարքերու մէջ իրանց ներգործական դերի մասին ոչ ոք ոչինչ չը գիտէ։ Նրանց պրովոկատորական պրոպագանդան ապացուցվեց գեներալ Մարտայի առաջ ակտատեսների միջոցով, որոնցից մէկը նոյն իսկ տեսել էր թէ ինչպէս Խաս-Մամէդօվը բաժանվեց Մէշիդի պատժի անկիւնում Բաֆիբէգովի հետ աշխատելով զրուցող մի քանի ուրիշ պատուելի Թուրքերին և դիմելով դէպի հաշտարար դատարանի կողմը, հանդիպեց Թուրք մի ուսուցչի, որին նա ասաց. «Ճնված է, սկսում ենք»։ Այդ բառերը լսել է վկան այն ժամանակ, երբ անցնելիս է եղել Խաս-Մամէդովի մօտով։ Դրանից քիչ յետոյ սկսվել է կոտորածը։

Մի ուրիշ ականատես հետևեալ ցուցումը տուեց, որ նա հրացանաձգութեան ժամանակ ներս վազեց մի ծանօթ Թուրքի խանութ, որը նրան թաքցնելով դռները ամրը, խանութը փակից ու գնաց։

Դռան ճեղքով վկան նկատում էր, թէ ինչպէս Թուրքերը պրիստաւի օգնական Արզուլքէգ-Կապանլինսկու հետ միասին, որը ոստիկանապետ Հասանբէգովի թիկնապահն է, ըստ ցանկանց կողոպտել նրա արհեստանոցը։ Այդ մէջտեղն Բաֆիբէգովը մօտ վազեց և ասաց նրանց. «այժմ կողոպտելու ժամանակ չէ, դա յետոյ էլ կարող էք անել, այլ հարկաւոր է կոտորելը։ Վկան տեսել է նոյնպէս, թէ ինչպէս ոստիկանապետ Հասանբէգովը, Ֆօրերի մոտանի մօտ, հրամայում էր իր թիկնապահին կրակել դէպի փախչող հայերը։

Թուրք ջարդիչների պարագլուխների ուխտագրծութեան մասին մի փոքր զաւակներ կազմելու համար մատնացոյց կանեմ հետևեալ փաստի վրա. նոյեմբերի 24-ին գեներալ Մարտայի ներկայութեամբ թշնամի կողմերը «հաշտութիւն» կնքելուց յետոյ, հայերը, պրիստաւ Կապանլինսկու ուղեկցութեամբ, հաւաստելով հաշտութեան, դնացին Թուրքական մասը հարազատների դիակները փնտռելու և տեսնելու իրանց աւերված տները ու խանութները, Թուրքերը անսպասելի կերպով յարձակվեցին նրանց վրա ու կոտորեցին։ Մինչդեռ խաղաղարար մատաժողովում Թուրքերի ներկայացուցիչները յայտնում օրը բացարձակեցին, որ այդ դէպքը պահել է «Թիւրիմացութեամբ»։ Ապա նոյեմբերի 25-ին պ.պ. Խաս-Մամէդօվը և Բաֆիբէգովը խաղաղարար մատաժողովում յայտնեցին, որ Թուրքերի մօտ գիրի են ՌՈՍ միքանի հայեր, նրանք խնդրեցին հայ ներկայացուցիչներին փոխանակել գերիները հայերի մօտ գտնվող Թուրքերի հետ։ Բայց երբ, երկրորդ օրը, հայերը պ. Իպիւմովի միջոցով Թուրք գերին իրան յանձնեցին, երկար սպասելուց յետոյ, Թուրքերից ոչացան լոկ հետևեալ պատասխանը. «Վենդանի մնացած հայ գերիներ չը կան»։

Լրագրական յօդուածում հնարաւորութիւն չը հայ մի առ մի թուելու Թուրք հասարակութեան «տակնքի» պրովոկատորական և դատաճանական արարքների բոլոր փաստերը։

Այս յիշածներն էլ բաւական է նրա համար, որպէս զի անաչառ ընթերցողը զայրոյթի արհամարհանքով վերաբերվի այդ մի խումբ Թուրքերին, որոնք անարգելիորէ մխառուներից զրկված՝ յեղաշրջում են իրանց նամակում Գանձակի արիւնահեղ դրամայի փաստերը։

Թուում է, որ հայ-Թրքական Թափված արիւն ծովը սրածայր պիտի մխվէր մեր ջղերի մէջ և մարդկային հոգու խորքերից դուրս խլէր վրդովված խղճի անկեղծ ձիչը։ Բայց ինչպէս երևում է, Թուրք հասարակութեան «միացարդների» մէջ անարգանքի անթափանցելի ամրով խեղդված է տարրական բարոյական զգացմունքը։

Թող լինի ամօթ, առանձնապէս, երգուեալ հաւատարմատար Ա. Խամամէդօվի համար, որ «Գանձակ» կայարանում մօտ ժամանակներս իր արտասանած ճառի մէջ, զիմելով մարդասիրող ոստիկանապետին սառը ձեւին, աշխատում էր զրգռել սպաներին հայերի դէմ։ Նա ասում էր նրանց, որ հայերը յեղափոխականներ են, և այդ պատճառով էլ Թուրքերը նրանց կոտորում են։ Եթէ այս վերջինները չը լինէին, հայերը գլուխը կ'անցնէին յեղափոխական շարժման... պ. Խաս-Մամէդօվը կոչ էր անում սպաների քաղաքացիական զգացմունքներին և խնդրում էր զինուորների գլխի մէջ մտցնել հայերի յեղափոխական արամադրութեան վնասակարութիւնը ռուսաց ինքնակալութեան համար, որոնց հետ համեմատելով ոչինչ են ռուսաց, լեհերի, ֆինլանդացիների, վրացիների ու հրէաների յեղափոխական ոգին։ Նա համոզում էր սպաներին ներշնչել զինուորներին, որպէսզի նրանք սուինազարկ չանեն Թաւուորական ինքնակալութեանը հաւատարիմ հպատակ մահմեդականներին *)...

Թող պ. պ. Խաս-Մամէդօվը, Բաֆիբէգովը և նրանց, ոչ պակաս մեղուկից, զինակիցները իմանան, որ հասարակական ինքնաճանաչութիւնը արժանաւոր կերպով կը գնահատվի ներքոյց պրովոկատորական պրոպագանդան, իսկ ազատութեան լեթարգիայից արթնացող Թուրք ազգաբնակութիւնը կը գտնէ իսկական դահիճներին, որոնք 11 ամսվայ ընթացքում առողջով կերպով թափում են հայ-Թուրքական արիւնը։

Թող պ. պ. Խաս-Մամէդօվները և Բաֆիբէգովները իմանան, որ հայերը ոչ միայն չեն մեղադրում այդ արիւնահեղ ջարդերում Թուրքերի ամբողջ մասային, այլ ընդհակառակը մեծ բաւականութեամբ յիշատակում են այն բարերար երևոյթը, որ մահմեդական ազգաբնակութեան ազնիւ տարրերը Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ պահում էին հայերին կատաղած Թուրք հրոսակների վայրագութիւններից։ Հայերը համոզված են, որ մահմեդական հասարակութեան բարեմիտ մասը անկեղծ կերպով վրդովված է ու խիստ պախարակում է հայերի վերաբերմամբ իրանց հաւատակիցների կողմից գործադրվող ազրէսիվ մէջբերումները։ Բայց հայերը հարկադրված են իրանց զէնքը ուղղելու մահմեդական ազգաբնակութեան «տակնքների» դէմ, որոնք արիւնարբու զգացմունքներով վրդովված, Թուրքական ազգա խուժանը հայերի վրա են ուղարկում։

Այդ բոլոր Խաս-Մամէդօվները, Բաֆիբէգովները և Թուրք ազգաբնակութեան ուրիշ թշնամիները իրանց յանցաւոր ագիտացիայով անմեղ հայ-Թուրքական արիւնն են Թափում։

Կը համի հաւատացման ժամը և կը կրեն նրանք իրանց արժանաւոր պատիժը հասարակական խղճի անաչառ դատաստանից...

(Тиф. Лис.) Ի. Ալիբէկով

*) Տե՛ս թերթ. *) Возрожденіе № 36, Զրեկովի յօդուածը «Գանձակի կոտորածը»։

ԴԱՐՁԵԱԼ ԿԵՆՏՐՕՆԱՅՄԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ

(Իմ պատասխանը պ. Խաժակին)

XI

Անցնենք այժմ Անգլիային։

«Մարքերի ու հասկացողութիւնների նոյն խառնաշփոթութեան արդիւնքն է և ան,—ասում է պ. Խաժակը,—որ անգլիական սամանադրական միապետութիւնը, որ իր լայն տարածական ինքնավարութիւններն շնորհով ազատ է բիւրօկրատիզմից, յօդուածադիրը համարում է մի «բացառիկ քաղաքական սիստեմ երկրագնդի վրա»։ Ամեն մարդ գիտէ,—շարունակում է մեր կրիտիկոսը,—որ անգլիական կազմը ծայրահեղ ապակենտրօնացում է, իսկ պ. Բ. Բ. հիանալի ինքնագոհութեամբ Անգլիայի կողքին կպցնում է «կենտրոնացած» բառը, մի սխալական, որը ոչ մի մարդ չի յատկացնի Անգլիային»։

Մենք իզուր չենք յայտնել մեր յօդուածի հենց առաջին մասում, որ պ. Խաժակը «Մուրճի» մեր յօդուածի շատ կէտերը չէ հասկացել կամ ձեռնամուխ չի զուել հասկանալու, իսկ մի քանին էլ ապատեղ է։ Այս քանիներորդ անգամն է, որ պ. Խաժակին ընում ենք մինչ տնարարեղծութեան ստիճանը հասցրած ապատղումների մէջ։

Մենք, պ. Խաժակ, աւելին գիտենք ու կասենք ձեզ Անգլիայի մասին, քան դուք երբ և իցէ երևակայել կարող էք։ Մենք Անգլիային համարել ենք անհիբիրօկրատիական, պարլամենտարական, ինքնակոնտրոլացուցիչ է, պ. Խաժակ, որ խորտակում ու տապալում է հին բէժիմի գոյութեան սիւները, ի միջի այլոց և բիւրօկրատական (ահա ձեզ անգամահատված Գերմանիան ու ինքնավար Աւստրան), այլ այդ երկրի քաղաքական կազմի դեմոկրատականացումը։

Մենք, ի հարկէ, չենք կարող պ. Խաժակին մեղադրել այս կամ այն խնդրը տեսական թէ փաստական կողմից չիմանալու, չը հասկանալու համար։ Բայց մենք կրկնակի իրաւունք ունենք նրան մեղադրելու, երբ նա խօսում է, նոյն իսկ հերքել աշխատում, մի կուսակցութեան քաղաքական ծրագիրը, առանց հրաւաքակ հանելու քննադատութեան նիւթ դարձրած կէտերը և շահագործելով այդ հանդամանքը, իր անկեղծութեամբ, միտումաւոր շեշտումներով ցոյց տալու ընթերցողներին, որ օսլիալ-դեմոկրատները ուզում են մի բռնապարտիստական ցնորաբլիգ հիմնել, նոյնքան ցնորաբլիստական, որ ունենայ ցարի կառավարութեան ամենամեծ բացասական կողմը—բիւրօկրատական սիստէմը։ Ի՞նչ է ուզում պ. Խաժակը մի ծրագրից—Ռուսաստանի սօց.-դեմօկրատիայի քաղաքական ծրագրի տեսակէտից, ապա նա փոխանակ բառապատութեամբ զբաղվելու, կը հասկանար և կը խոստովանէր, որ ամենմի հաստատական կազմ, նրա վարչական մեխանիզմի դեմոկրատականացումը անհրաժեշտորէն ամփոփում է իր մէջ ֆեդերատիզմ (լայն թէ նեղ, դա տեղական պայմաններից և քաղաքական յարաբերութիւններից է կախված) սկզբունքը և նրա հշդրիտ իրականացման հարկադրութիւնը։ Հենց ինքը ազգային, քաղաքային, գիւղական, համայնական (կոմունալ), քաղաքական ինստիտուցիոնների, հասարակական-կրթական հասարակութիւնների լայնարձակ, ինքնավար, աւտոնոմ գործունէութիւնը ըմբռնում է դեմոկրատիզմի հուիւնից, նրա սկզբունքային արժէքից։ Եթէ այսօր այդ բոլորը իրականացած ենք տեսնում առանց կամ պակաս չափերով Շվեյցարիայում և Անգլիայում, ապա այդ լոկ այն պատճառով, որ այնտեղ իրականացել են դեմոկրատիզմի հիմնական սկզբունքները։ Ոչ թէ ընտրեցեք մի երկրի պետութեան անդամահատումը, ապակենտրոնացումն է, պ. Խաժակ, որ խորտակում ու տապալում է հին բէժիմի գոյութեան սիւները, ի միջի այլոց և բիւրօկրատական (ահա ձեզ անգամահատված Գերմանիան ու ինքնավար Աւստրան), այլ այդ երկրի քաղաքական կազմի դեմոկրատականացումը։

Մենք, ի հարկէ, չենք կարող պ. Խաժակին մեղադրել այս կամ այն խնդրը տեսական թէ փաստական կողմից չիմանալու, չը հասկանալու համար։ Բայց մենք կրկնակի իրաւունք ունենք նրան մեղադրելու, երբ նա խօսում է, նոյն իսկ հերքել աշխատում, մի կուսակցութեան քաղաքական ծրագիրը, առանց հրաւաքակ հանելու քննադատութեան նիւթ դարձրած կէտերը և շահագործելով այդ հանդամանքը, իր անկեղծութեամբ, միտումաւոր շեշտումներով ցոյց տալու ընթերցողներին, որ օսլիալ-դեմոկրատները ուզում են մի բռնապարտիստական ցնորաբլիգ հիմնել, նոյնքան ցնորաբլիստական, որ ունենայ ցարի կառավարութեան ամենամեծ բացասական կողմը—բիւրօկրատական սիստէմը։ Ի՞նչ է ուզում պ. Խաժակը մի ծրագրից—Ռուսաստանի սօց.-դեմօկրատիայի քաղաքական մերձաւոր նպատակից,—որի իրականացումով Ռուսաստանը կը լինի աւելի ապակենտրոնացած, քան իր այնքան գովված «ծայրահեղ ապակենտրոնացում» ունեցող Անգլիան, և աւելի դեմոկրատական, քան Եւրօպայի և Ամերիկայի որ և է երկիրը (մինչև օրս ոչ մի երկրում օսլիալիստական կուսակցութիւնները լիովին չեն իրականացրել իրանց ծրագրի մինիմումը, իսկ Ռուսաստանի օսլիալ-դեմոկրատիայի մերձաւոր նպատակէտ՝ դեմոկրատական հասարակաբանութիւնը պիտի իրականացնէ ծրագրի այն մինիմումը)։ Այլ բան է, անպայման, եթէ պ. Խաժակը վիճելի դարձնէր օսլ.-դեմոկրատիայի ծրագրի իրականացման հնարաւորութիւնը. այդ, ասում ենք, բոլորովին այլ խնդիր կը լինէր և մենք կը խօսէինք պ. Խաժակի հետ այլ կերպ։ Այստեղ, սակայն, խնդիրը վերաբերում է բուն ծրագրային կետերին, որպէս այդպիսիք։

Եթէ մեզ աջողվել է մեր յօդուածի բոլոր մասերում հիմնապէս հերքելու պ. Խաժակի թեզիսը՝ բիւրօկրատիայի և կենտրոնացման յարաբերութեան նկատմամբ (որ նա արծարծում է իր ամբողջ յօդուածում), նշանակում է մեզ աջողվել է առհասարակ հերքելու նրա բոլոր տասածները ու պնդածները։ Եթէ պ. Խաժակի թեզիսը ճիշտ լինէր, ասել էինք «Մուրճ»-ում, այն ժամանակ աւելորդ կը լինէր վիճել. բայց այժմ աւելի, քան երբ և իցէ, տեսանք ու հասկացանք, որ մեր պ. քննադատը չը փրկեց իր այն սատիճան մեխանիկական, բանազրօսիկ և անընդհանրական թեզիսը։

«Մուրճի» մեր քննադատութեան միւս կէտերի վերաբերմամբ պ. Խաժակը չի անում ամենաչնչին փաստական առարկութիւններն անգամ։ «Ես մի կողմ եմ թողնում պարոնի յօդուածի միւս մասերը»—ասում է հենց ինքը։ Պ. Խաժակի խուսափողական ընդհանուր փրամները, իրան յատուկ ապաւաղումներով հանդերձ, ոչինչ նիւթ ու ատիթ չեն տալիս մեզ երկար ծանրանալու նրանց վրա, այնպէս որ «Մուրճի» մեր քննադատութիւնը պահպանել է իր լի ու լի արժէքը այդ կէտերի նկատմամբ։

Պ. Խաժակը նորից յիշում է Verus-ի, կաուցկու անունները և ոչ միայն ոչինչ չէ հաղորդում ընթերցողներին մեր տասածներից նրանց յայտնած կարծիքների վերաբերմամբ, այլ և իր դրական ցինիկութեամբ նորից ու նորից ապատղումներ է անում, և այս անգամ աւելի խոշոր, քան երբ և իցէ։ Նա հաղորդում է, որ իբր մեր կարծիքով Կաուցկին փեդերատիւ կազմ է առաջարկում Ռուսաստանի համար, որովհետև նա (Կաուցկին) այդ կազմը աւելի լաւ է համարում, քան նեռկայ բիւրօկրատական հեռիմը։ (Նօտբ գրերը մերն են)։

Մենք բացարձակապէս բոլորում ենք պ. Խաժակի այս գրական անմաքրութեան դէմ. հերքեք է, որքան չեղած ու տենդենցիոզ խօսքեր ու մաքեր վերագրեցեք ուրիշներին։

Մենք ասել ենք «Մուրճում» և սրանով պնդում ենք, որ Կաուցկին ծանօթ չը լինելով Ռուսաստանի բոլոր յայտնի կուսակցութիւնների քաղաքական ծրագրների հետ, զբաղատարար մի քանի չափազանցութիւններ է անում։ Օրինակ Կաուցկին կարծում է, որ Ռուսաստանի սոցիմներում ապրող զանազան ազգերի—ֆիններին, լիտվացիներին, փոքր-ռուսներին և կովկասեան զանազան ժողովուրդների մէջ եռում է մի զօրեղ մղում՝ Ռուսաստանից զօռով անջատվելու և կառաւարական պետական ինքնուրոյնութիւն ձեռք բերելու։

Ահա ձեզ, պ. Խաժակ. ասացէք, գոյութիւն ունի մի այս օրինակ տեղարտասական ընդհանուր ձգում Ռուսաստանում՝ ընդհանրապէս և Կովկասում՝ մասնաւորապէս։ Հենց այս բայրայիչ սեպարատիզմի (մի բան, որի մէջ, կրկնում ենք, զբաղարար հաւատացած է եղել Կաուցկին) համեմատութեամբ է, ասել ենք մենք, որ Կաուցկին զերազանել է ընտրել է ֆեդերատիւ ձեր. մի ընտրութիւն, որ կանէր Ռուսաստանի ամեն մի սօցիալ-դեմոկրատ։ Սակայն պ. Խաժակը չուզի ամենաչնչին փաստն անգամ, ցոյց տալու, որ Կաուցկին իր պնդումները հակադրում է մեր երկրի սօցիալ-դեմոկրատիայի քաղաքական ծրագրի պահանջներին։

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ հայ մարքսիստները ինչպէս ենք հասկանում և ընդունում է Կաուցկու հեղինակութիւնը, մենք կասենք միայն, որ դա Խաժակների գործը չէ. բուրժուական իդէօլոգների այժերից վեր է զանաւոր հանդիսանալու մարքսիստների մէջ։

Բ. Իշխանեան

(Վերջը յաջորդ անգամ)

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՐԱՑԳԻՈՒԹԵԱՆ

I

Թիֆլիս փետրվարի 1-ին

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսից հաստատված կենտրոնական նպատամատոյց Ցանձնաժողովը խնդրում է Ձեզ հրապարակել հետևեալը։

Նպատամատոյց Ցանձնաժողովը սաստիկ է 1905 թ. նոյեմբերի 25-ից մինչև այսօր—1906 թ. փետրվարի 1-ը հետևեալ նուէրները ի նպաստ ազիտեալ հայերի.

1) «Մշակի»-ի խմբագրութիւնից—սրա հաւաքած գումարներից մի քանի անգամ 8000 ր. 2) Արշալոյսի» խմբագրութիւնից—սրա սաստած գումարներից մի քանի անգամ 3500 ր., 3) Տիկ. Մարիամ Խաչատեանի ձեռքով հանդանաված 1939 ր. 50 կ., 4) Դարձեալ նոյնից 361 ր. 35 կ., 5) Դարձեալ նոյնից 388 ր. 40 կ., թիֆլիսի սրբազան ազգնորդի միջոցով 95 ր. 80 կ., 6) Դարձեալ սրբազանի միջոցով 4533 ր., (որից 2000 ր. Պետերբուրգի եկեղեցական խորհրդից, 2375 ր. Նոր-Նախիջեւանից Մուշէ վարդապետի ձեռքով հանդանաված, 100 ր. Ս. Եղիգարեանից, 50 ր. հաւաքած իշխանուհի Թումանեանի ձեռքով, 25 ր. Յ. Բաղչեանից և 3 ր. Եգարեանից), 8) Աւեխս Վարդապետեանից 5 ր., 9) Բօսոնի հայ գաղութից «Հայրենիք» լրագրի միջոցով 221 ր. 80 կ., 10) Վեհափառ Կաթողիկոսի դիւանատան միջոցով արտասահմանեան հայերից 2000 ր., 11) Թիֆլիսի մի խումբ կանանց ընկերութիւնից 439 ր. 26 կ. (որից 205 ր. Աստրախանի հայուհեաց Բարեգործական ընկերութեան կողմից), 12) Դարբիրեանից և տիկ. Շարապեանից 25 ր., 13) Տարվերդիների փոխարէն Շաարեանից և Ստ. Մարխասեանից 15 ր. 50 կ., 14) Ժը-նեվից՝ հայ ուսանողական միութիւնից 958 ր. 13 կ., 15) «Լուսայն» խմբագրութեան ձեռքով 100 ր., 16) Գանիրէից «Լուսաբեր»-ի խմբագրութեան միջոցով 380 ր., 17) Դերասան Ա. Յարութիւնեանի ձեռքով հանդ. 21 ր 80 կ.։ Գումարն է 23,004 ր. 54 կ.

Հնդամենը Ցանձնաժողովս իր նախկին ըստացածների հետ—սկսեալ 1905 թ. փետրվարի 14-ից մինչև այսօր, ստացել է 139,435 ր. 44 կ., որից մինչև այսօր ծախսել է աւելի քան 115,000 բուբլի։

Այդպիսով Ցանձնաժողովս տրամադրութեան տակ մնում է մօտ 25,000 բուբլի, որը շատ չնչին է, եթէ նկատի առնենք առաջին կարիքը և ապագայ սովը մի քանի գաւառներում։

Ցանձնաժողովի անդամ գանձապահ՝
Ա. Մելիք-Աղարեան
Անդամ-քարտուղար՝
Հ. Առաքելեան

II

Գանձակ, յունվարի 29-ին

Անդրում ենք ձեզ թերթիդ մօտակայ համարներից մէկում զեկուել Գանձակի Ազգասիրաց Ցանձնաժողովի հետևեալ հաշիւը։

«Մշակի» 7-դ համարում տպվեց Ցանձնաժողովս համառօտ հաշիւը, որից երևաց, որ նոյեմբերի 22-ից մինչև յունվարի 5-ը մուտք է գոյացել զանազան պարտներից և հաստատութիւններից 9270 ր. աւելի և ծախսվել էր 3303 ր. 62 կ.

Յունվարի 7-ից մինչև այժմ Ցանձնաժողովս ստացել է հետևեալ գումարները. 1) Զաքաթալից և Լագօդեխից՝ Պետրոս Յովհաննեսեանի ձեռքով 130 ր., 2) Աստրախանից՝ Սրբ. Էջմ-Գէորգ Մկրտչեանի ձեռքով 1000 ր., 3) Բաքուից հայ-Թուրք ուսանողների տուած երեկոյթի արդիւնքից պ. Մաչիկեանի և ընկերների ձեռքով 670 ր., 4) Սղնախից՝ պ. Արամ Եղիազարեանցի թղթով 110 ր.։ Ուրեմն վերև յիշված 9270 յուբլու հետ միացնելով և այս վերջին ստացված 1910 ր. ընդհանուր գումարը մինչև յունվարի 23-ը լինում է 11,180 բուբլի։ Իսկ ծախքը յիշեալ 3303 ր. 2 կ. վրա աւելացնելով մինչև յունվարի 23-ը 3383 ր. 74 կ.։ Ընդհանուր ծախսը լինում է վեց հազար վեց հարիւր ութսուն և վեց բուբլի 76 կոպէկ։

Վերջին կարճ ժամանակամիջոցում երեք հազար բուբլուց շատ ծախսվելու պատճառն այն է, որ 650 ր. կանխիկ դրամ ուղարկվեց Զաքաթալու գիւղը։ 400 ր. կանխիկ ուղարկվեց Բարսում և Գառնակեր գիւղերի գաղթականներին, 400 ր. կանխիկ յանձնվեց քաղաքս «կարմիր խաչի» հիւանդանոցի պահպանութեան ծախս, որտեղ բժշկվում են գիւղերում եւ քաղաքումս վիրաւորված հայ ինքնապաշտպանութեան զինուորներ։

Ցանձնաժողովս յայտնելով իր խորին շնորհակալիքը նուիրատու պարտներին ի դէմս քաղաքիս և գաւառի հաղարաւոր արիածաղներին, խնդրում է հայ հասարակութիւնից չը խնայել իր փրկարար աշխատութիւնը այն թշուառներին, որոնք խնամվում են թէ քաղաքումս և թէ գիւղերում։

Տեղիս Կարմիր խաչի անդամուհիների և պ. պ. ուսանողների և յանձնաժողովիս անդամների մասնակցութեամբ կազմված ցուցակից երևաց, որ միայն Գանձակ քաղաքում ներկայումս գտնվում են 2,300 թշուառներ, թէ քաղաքացի և թէ գիւղացի, որոնք նպաստ են ստանում յանձնաժողովից, նոյնպէս և երկու հազար չափ էլ գիւղերումն են ցրված Բաղա, Ղազախ, Գեռաբէկ և գերմանական Անտենգիւտ գիւղերից եկած և թշուառացած ազգայինները։

Նոյնպէս և յանձնաժողովս իր խորին շնորհակալիքն է յայտնում գանձակցի և այժմս Արմաւիրում գտնվող երգուեալ հաւատարմատար Զաւադ բէգ Բալաբէգանին, որի նախաձեռնութեամբ և միջոցով ստացանք 2 վագոն ալիւր, մօտաւորապէս 1500 պուդ, որը շատ խնայողութեամբ բանվում է խեղճերին, իւրաքանչիւր ընտանիքին, թի համեմատ։

Նախագահ Ազգասասնամ Ցանձնաժողովի՝
Կորիւն վարդապետ
Անդամներ՝ Անդրէաս Սերեբրեանեան
Նիկողայոս Մարութեանց
Սիմէոն Բարաքիսեանց
Քարտուղար՝ Աւ. Սահակեան

III

Թիֆլիս, յունվարի 31-ին

Անդամ Գրիգորիս քահանայ Երզնկեանի «Բաց նամակի» և «Մշակ» լրագրի № 21-ում հայր Սարգիսեանի նամակի դէմ խոնարհաբար խնդրում եմ զետեղել հետևեալ երկտողը։

Երբ կօնսիստորիայում ծառայողները մեր մարդկային ամենասարբական իրաւունքների մասին համարձակութիւն ունեցանք խօսելու և բոլոյնի ազուէնդորդը գրենք անդամ Գրիգորիս քահանայի ձակատին, նա փըրփուրը բերանին պատէպատ ընկաւ, կոչ արաւ համայն աշխարհին, որ շուտով գան, իրան օգնեն և ցոյց տան մեր՝ ծառայողներիս կշառակերութիւնը։ Այդ կոչին ձայնակից եղաւ իրան նման մի հոգևորական, որը ուզում է ձգնել, ցոյց տալ, որ ես նգօր Մօսէիչից հարիւրով կաշառ եմ կերել։ Այդ զաղրելի նամակին ես այժմս պատասխան չեմ տալ, թողնելով որ Եչմիածնի Ամենօրեայ նշանակված բարձրագոյն քննիչը երևան հանէ ամեն բան և ցոյց տայ, թէ գէ раки зимуютъ։ Այսքանը կասեմ, որ ես ոչ թէ վրացերէն գրել, այլ և խօսել անգամ գժուարանում եմ, ուր մնաց թէ վրացերէն նամակագրութիւն սկսեմ։ Հայր Սարգիսեանից այդքանը կը խնդրեմ, որ հրապարակով ցոյց տայ, թէ ես նգօր Մօսէիչից ինչքան եմ ստացել և թէ ինչ մտքով պատմութիւն կայ հրապարակ հանելու, որից շատ հոգեկան կը լինեմ։

Ինձ ասում էին, որոնցից մէկին էր նոյն ինքն պ. Գրիգորիս Երզնկեանցը աշխարհական ժամանակ, երբ ազգասէր ազգայնիների մէջ հնաբաշ շարերով էր շրջում, որ հոգևորականներից ոմանք ընդունակ են չեզած յանցանքներ ստեղծել իրանց հակառակորդների դէմ և զրկել նրանց պատուից և անունից։ Այժմ ես բոլոր հոգով հաւատում եմ, որ այդ ձիշտ է։ Զաւադ եմ, որ վաղը ինձ աւազակ և մարդասպան էլ կը դարձնեն, սակայն համոզված եմ, որ լոյս արդարութիւնը երկար չի թաղվի և արեւի հաճանչների նման կը փայլի։

Թող հայր Գրիգորիսը հոգևորականի աքեմի տակ իր շանթերն արձակի, մեզ «թշուառներ և ոգորմելիներ» անուանի, բայց լաւ հասկանայ, որ կաշառներ ուտողը չի գտնվի մեզ նման աղքատ, պարտքերի մէջ խեղդված, այլ գրամատներում կանխիկի փող կուտենայ և կարչածներ և ան սատանեք «Գ. Ե.» անուանական ինքնագիրով գրաշրված։ Երկար ու ձգ տարիներ աւագ ուսուցչի և ուսուցչի պաշտօնեք եմ վարել և ութ տարի կոնսիստորիայի գիւանապահի պաշտօն եմ վարել անբիծ և անարատ, և յոյս ունեմ, որ Գրիգորիսների և Սարգիսեանների նման հոգևորականների կեղտոտ և գազալի որոգայթներից էլ փրկե և անբիծ մնամ։

Բ. Այվազեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդը որոշել է յատկացնել Ազդրվովկասի հայ սովեալների համար 100,000 բուբլի։ Եկեղեցական խորհրդի պատասխանը նախագահը իշխան Արամեանը-Լազարեան տուել է իր համաձայնութիւնը։ Եկեղեցական խորհրդի այդ որոշումը ներկայացվել է Բեսարաբիայի թեմի առաջնորդին և հաստատութիւն։ Այդ գումարը զորձադրվելու է Վեհափառ Կաթողիկոսի հաստատած յանձնաժողովի ձեռքով։ Կասկած չը կայ, որ այդ համաձայնութիւնը կը հաստատվի Բեսարաբիայի թեմի առաջնորդի կողմից։

—

Յունվարի 26-ին Բերլինից մի վագոն կրտրած ոսկու փոշ է եկել Պետերբուրգի պետական բանկի համար։

—

Արտասահմանի լրագիրները հաղորդում են, որ ռուս յայտնի գործոց պ. Սիմէօնովը, Բերլինում անցնելիս՝ կամեցել է մի զեկուցում կարդալ այդ քաղաքում՝ Ռուսիայում կատարվող անցքերի մասին, բայց հենց այն րոպէին, երբ նա սկսել է բարձրանալ ամբիոն իր զեկուցումն կարդալու, պրուսական իշխանութիւնից հրաման է ստանում—24 ժամվայ ընթացքում հեռանալ Պրուսիայի սահմանից, որպէս «վտանգաւոր օտարական»։ Զը նայելով այդ կարգադրութեան, այնուամենայնիւ զեկուցման կայանում է և Սիմէօնովը, պէտք է կարծել, յայտնելու բոլէից երևի 24 ժամ ժամանակ ունենալով՝ կարողանում է գալ ու բերել իր դատախօսութիւնը, որից յետոյ դուրս գալով պրուսական սահմանից՝ ուղարկում է բողոք պրուսական իշխանութեան դէմ այդպիսի կարգադրութեան համար։ Որպէսզի ընթերցողներին ծանօթացնենք պ. Սիմէօնովի անձնաւորութեան հետ, հարկաւոր ենք համարում հետևեալ տեղեկութիւնները։

Պետերբուրգում ամսին Պարլիզում, Սիմէօնովի դրական բնակութեան վայրում, որտեղ նա «Européen» լրագրի խմբագիրներից մէկն է—հիմնվեց մի «բողոքի կոմիտէ», որը հիմնվելու օրից ունէր 300 անդամ ինտելիգենտ դասակարգից և որը իր նիստում պ. Սիմէօնովի նախագահութեամբ ծրագրեց իր նպատակը—այն է՝ բողոքելով և դատափետելով ռուս կառավարութեան վարմունքը Տրեպովի, Կաուլբարսի, Նեյդ-Գարդի և ուրիշների ժամանակ՝ կօզակների և «ավանդարդի» ձեռքով կատարած հրէաների և ինտելիգենցիայի ջարդերի և շահատակութիւնների դէմ, պարզել Եւրօպայի հասարակական կարծիքի առաջ այդ անցքերի իսկական միաքը և նշանակութիւնը։ Առաջին նիստը բացվել է նոյեմբերին, Ֆրանսիական թատրոնի հրապարակի վրա, Ռուսիսի սրահում։ «բողոքի կոմիտէն» դիմել է Եւրոպական պարլամենտներին այդ հարցի վերաբերութեամբ, որոնք իրանց կողմից վճռել են պարլամենտական նիստ չը դարձնել այդ խնդիրը՝ այլ իրանց պետութիւնների միջոցով դիմումներ անել ռուս կառավարութեան։ Իրանց կոչի մէջ նրանք, ի միջի այլոց, յայտնում են հետևեալը՝ «Նրանք, որոնք ուզում են հրէական ազգի ջնջման առաջն առնել, հայերի, որոնք իրանց ազգի գոյութեան իրաւունքներն են պաշտպանում և բոլոր միւս հալածեալների—պիտի է մնանան ռուս պրօլետարիատի և ռուս ինտելիգենցիայի հետ. մեր մէջ մտնում են ռուս առաջադ

և ֆելդշերներից՝ քաղաքիս մէջ արտաքոյ կարգի դէպքերում և ծանր վիրաւորվածներին բժշկական առաջին օգնութիւնը հասցնելու։ Ժողովը որոշեց օրապահութեան համար նշանակել ամէն օր գիշերվայ ժամի 8-ից մինչև ցերեկվայ ժամի 8-ը։ Այդ համակրելի նորութիւնը քաղաքիս սանիտարական-բժշկական խորհրդի կողմից անշուշտ ժամանակակից ձեռնարկութիւն է, միայն ցանկալի է, որ օրապահ բժիշկների և ֆելդշերների հետ կանանց պերսոնալ ևս նշանակվի օրապահութեան օրերին՝ կանանց սեռի պէտքերի համար, դժբախտ պատահարների դէպքերում։

—

Թէ որքան մեծամեծ նիւթական վնասներն են հարկադրվել զանազան անձինք Ռուսաստանի անկարգութիւնների ժամանակ, այդ ի միջի այլոց երևում է նրանից որ միայն մի գերմանացի բարօն 11 միլիոնի պահանջ է ներկայացրել պետական գիւանատան։

—

Ռուսաստանի 45 նահանգապետներ տեղեկագրեր են ներկայացրել ներքին գործերի մինիստրութեան՝ գիւղացիների մէջ սկսած շարժման և անկարգութիւնների մասին։ Այդ տեղեկագրների համաձայն 18 նահանգապետներ անկարգութիւնների պատճառները գիւղացիների սակաւահողութեան են վերագրում, մնացած 27 նահանգապետներ այն ընդհանուր կարծիքի են, որ ագրարային անկարգութիւնների զօրեղ խթանը սակաւահողութիւն չէր, որովհետև իրանց նահանգի բոլոր հողերը՝ գիւղացիներին է պատկանում, այլ՝ յեղափոխական զօրեղ պրօպագանդան և միւս կողմից իշխանութեան անզգալութիւնը։

—

Պետերբուրգի բանտային վարչութիւնը մի չև անգամ գժտաները լցնելուց յետոյ, հարցրել է Բիւդջի նահանգապետից, թէ արդեօք չէ կարող երկու հարիւր կանանց համար բանտի տեղ յատկացնել։ Բիւդջից պատասխանել են. «Անկարելի է. ամէն տեղ լիքն է։» Բայց հնարաւոր միջոցները ձեռք են առնվում Պետերբուրգում, կայսրութեան կենտրոնը գերծ պահելու համար ամէն նոր պրոպագանդից և մանաւանդ արգելելու համար զէնքերի ներմուծումը մայրաքաղաքում, որոնք անդադար բերվում են Ֆինլանդիայից։ Պետերբուրգը շրջապատված է մի ոստիկանական շղթայով, որը դժուարութեամբ կարելի է պատառել։ Սահմանապահ զօրքեր գրաւած են մասնաւորապէս Նովայա-Դէրէվնան և Սաարյաա-Դէրէվնան, որոնք Պետերբուրգի հիւսիսակողմում բազմամարդ գիւղեր են։ Զօրքերը պաշտօն ունեն խուզարկելու այն բոլոր անձերին և ծրարները, որոնք գալիս են Ֆինլանդիայից որ և է ճանապարհով։

—

Ոչ միայն ցամաքային և ծովային զօրքից, այլ մինչև անգամ հոգևորականութիւնից պահանջվում է ցոյց տալ ոչ թէ չինովնիկներին յատուկ հաւատարմութիւնը, այլ և բացարձակ յետադիմական վերաբերմունք։ Մ. Սինոդը վճռել է քահանայութեան իրաւունքից զրկել այն բոլոր հոգևորականներին, որոնք պահանջել էին մահվան պատիժի վերացումը։

—

Մանջուրիական զօրքերի խնդիրը հետզհետէ աւելի մտատանջում է կառավարութեան։ Գլխաւորը դեռ ևս Խարբինի և անդրսիբիրեան գծի երկաթեղեցիկ ապատավված զօրքերի հարցը չէ, այլ այն զինուորների՝ որոնք ամէն օր հայրենիք են հասնում և աւելացնում են անկարգութեան տարրերի քանակը։ Անթիւ են այն զօրքերը, որոնք չեն կարողանում իրանց գաւառները վերադառնալ, այնտեղ տիրող անիշխանական դրութեան պատճառով։ Եւ յետոյ պէտք է ասել, որ ինքը կառավարութիւնն ևս չէ ցանկանում որ նրանք գնան իրանց գիւղերը և մեծացնեն զգդոների թիւը։ Դրա համար էլ կառավարիչները կայացրել է հետևեալ ծանրակշիռ որոշումը—ստեղծել ազգային արհեստանոցներ։ Կայսրուհին ինքը, պէտք է այդ գործին գլուխ կանգնի։ Նրան պէտք է օգնէ Օլգա Ալէքսանդրօվնա մեծ դքսուհին, որը արդէն ցոյց է տուել, պատերազմի ընթացքում, որ տէր է նախաձեռնութեան բացառիկ ոգու և կազմակերպելու իսկական շնորհք։ Նա է, որ ամենագործաւոր բարէներին, կարող եղաւ Կարմիր-Խաչի ընկերութեան ծառայութիւնը իր բարձրագոյն աստիճանին հասցնել տալ։ Նրա կազմակերպած սանիտարական գնացքները նկատվել են իր տեսակի մէջ օրինակելի տիպարներ։ Պետերբուրգում, նրա այդ ձեռնարկին յատկացվում է բաւական խոշոր նպաստ. նա արդէն վճռել է կառուցանել տալ ահագին ապաստարաններ, որպէսզի, մինչև իրանց համար գործ ճարելը, զինուորները կարողանան այնտեղ տեղաւորել։ Կայսրը այդ գործի համար նուիրել է մէկ միլիոն ռուբլի։

—

Հոկտ. 17-ի կուսակցութիւնը յայտարարում է, որ նա իր աջակցութիւնը կը շնորհէ կառավարութեան միայն այն ժամանակ, երբ այս վերջինը կիրազործէ սահմանադրական միապետութեան սկզբունքը, սկզբունք, որ հաստատված է հոկտ. 17-ի մանիֆեստում։ Այս կուսակցութիւնը մինչև այժմ նկատվում էր որպէս բիւրօկրատիայի ազդեցութեան կատարելապէս ենթարկված մի կուսակցութիւն, որ ամփոփում է իր մէջ բիւրօկրատիայի անդամների մեծամասնութիւնը։ Կուսակցութեան այդ յայտարարութիւնը հետաքրքիր է այն տեսակէտից, որ նոր ցոյց է տալիս անդիմադրելի շարժումը դէպի ձախ, որ նկատվում է քաղաքական բոլոր կուսակցութիւնների մէջ։

—

Մոսկվայի ազնուականութեան պարագլուխ իշխան Տրուբեցկոյ մի տեսակցութեան ժամանակ ասաց, որ ազնուականութեան համաժողովին ներկայ եղող իր ընկերները միաբերան այն միտքն են յայտնել, որ առաջիկայ գարնան նախատեսվում է ագրարային մի սարսափելի կրիզիս։ Գիւղացիները անկասկած կը բաւեն հողերը և կարող է լինել որ քաղաքացիական պատերազմ ծագէ հողաբաժնութեանառթիվ։ Մի ակ յոյսը խուսափելու աղէտից—կայսրուն է Դումայի անմիջական հրաւիրմամբ մէջ։ Իշխան Տրուբեցկոյ մինոյն միտքն է արտայայտել կայսրի առաջ։

—

Երէկ մենք հաղորդել էինք Ստեփ. Ղարագեանի սպանութեան լուրը։ Մեր լրացուցիչ հաւաքած տեղեկութիւնների համաձայն՝ սպանութեան պատճառը իբրև այն է եղել, որ հանգուցեալը ընդհանուր գործադուլների ժամանակ, երբեմն, որպէս բացառութիւն, շարունակել է խանութը բանալ և առևտուր անել, որի համար իրան մի քանի անգամ իբրև նախազգուշացրել են։

—

Պետական բանկում հարց է ծագած՝ մուրհակով փոխ տրվելիք գրամների համար տոկոսը էլի աւելացնել ոսկու պաշարը չը նուազեցնելու համար։

—

Բացի մուռքերի մօտ խուզարկութիւններից կօզակների ձեռքով եղը. Թամամշանների քարվանսարայում, փետրվարի 2-ին առաւօտեան ժամ 8-ից մինչև կէսօրից յետոյ ժամի 3-ը, քարվանսարայի նեղը ևս երկար խուզարկութիւններ կատարվեցան։

—

Պետերբուրգի լրագիրների խօսքով, մամուլի պատիժների վերաբերմամբ վերջին օրինագիծը բաղկացած է երկու յօդուածից և որոշում է հետևեալ պատիժները։ Կառավարական հաստատութիւնների վերաբերմամբ սուտ տեղեկութիւններ տարածելու համար բանտարկութիւն մինչև 3 ամիս։ Եթէ այդպիսի տարածման հետևանքը կը լինի կարգի այս կամ այն խախտումը, բանտարկութիւն մինչև մէկ տարի և աւելի բարձր, նայելով թէ ինչ յատկութիւն ունի կարգի խախտումը։

—

Մօտ օրերս Մոսկվայի հայասարանի պրոֆէսսոր պ. Մանուելովը ծրարել էր ուսանողական համագումար կազմելու պետական քննութիւնների հարցի մասին խորհրդակցելու։ Ադմիրալ Դուբասովը ընդդիմացաւ այդ բանին, սպառնալով համալսարանը գրաւել զօրքերով։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստր կօմս Օրլոսովը պետական խորհուրդի նիստում բողոքից պ. Դուբասովի այդ յայտարարութեան դէմ («Ս. Ռ.»)։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

—

Փետրվարի 1-ին, համաձայն Ղազաքիվանայի պրեսուաւի հեռագրի և մի քանի մարդկանց մատնացոյց անելուն, 8-րդ քաղաքամասի զօրօղովը ձերբակալել է Ալէքսանդրօպոլի գաւ. եպայլ գիւղի քահանայ Տէր-Գրիգորեանի և նրա կնոջ սպանող նոյն գիւղի բնակիչ Մովսէս Օհանէսեանին։ Մ. Օհանէսեանը ենթարկված է դատի։

—

Փետրվարի լոյս 2-ի գիշերը, Յարութիւնեանի բակից (Լազարևսկի փողոց) գողացված է 2 հակ ալրաց, 600 ր. արժողութեամբ որը կարգադրված էր տեղացի Ստեփան Մակեևի ձեռքով ուղարկել Յօմբոր, և որը պատկանում էր Աթայլեթայի բնակիչ Հրէայ Մէյեր Մանասերաշվիլիին։ Գողերը յայտնի չեն։

—

Փետրվարի 1-ին, առաւօտեան մօտ 10 ժամին, Վլադիմիրովի Նահանգի Իվան Բլինովը, 18 տարեկան, իր հայրենակից Անտոն Կաղանովային 2 տեղից վիրաւորեց։ պիրուարվածը ուղարկված է Մէրքէչեան հիւանդանոցը, իսկ յանցաւորը ձերբակալված և դատի է ենթարկված։

—

Անցեալ տարվայ հոկտեմբեր ամսին անյայտ մարդկի գողացել էին Ախալցխայի բնակիչ Մարէն Գրիգորեանի Գեղամեանի, բաց մեղուվից ոսկէ զարդարանք 312 ր. 80 կ. արժողութեամբ։ Գեղամեանը մինչև յունվարի 28-ը չէ յայտնել այդ դէպքի մասին ոստիկանութեան։ Յայտնելուն պէս, գործը յանձնվեց 6-րդ քաղաքամասի ոստիկանական վերակացու Մանասարեանցին, որն և աշխատեց գտնել գողերին։ Քննութիւնից պարզվեց, որ հոկտեմբեր ամսին հիւր են եկել Ախալցխայի բնակիչներին Հասրաթ և Մորէն Իսկանեանները, որոնք յտատրվել Թիֆլիսից գնացին Ախալցխա իրանց մօրաքրոջ Երմոնիա Նարիմանեանի տունը։ Վերջինը, զողացված իրերի մի մասը ծախել զանազան մարդկանց, իսկ միւս մասը, նրա մահից յետոյ զոհն նրա անկողնում որ գտնվում է Ախալցխայի պրիստաւի մօտ։ Օկօլոդնիի Մաճախարեանին ձերբակալել է Նախալցկայում Իսկանեաններին, որոնք յանձնված են Թիֆլիսի 2-րդ հաշտարար բաժանմունքի առանձին մասի քննչին։

—

Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութի գանձապահ Մատա Դ. Լազարեանը և Գանձակի բնակիչ Վասիլից Սարգսեանը յայտնել 5-րդ քաղաքամասի պրիստաւին, որ փետրվարի 1-ին, երեկոյեան մօտ ժամը 9-ին, Գօլովէյակի փողոցով անցնելիս, նրանց կանգնեցրին 6 զինված մարդկի և վերջինին նրանցից 100 ռուբլի, որից յետոյ անյայտացան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Թիւրքիա.—Սուլթանի անձի դէմ մահափորձի առիթով կազմված քնչիչ արտաքոյ յանձնաժողովը, որ իր գործը աւարտած լինելու պատճառով լուծվել էր, վերջերս նորից կազմվել է նոյն Նէշիբ Մելհամէի նախագահութեամբ։ Նէշիբ Մելհամէն չէ ուզում իւրոյն պաշտօնը իր կռուցից բաց թողնել։ Նա ճարել է պարբանալու հնարքը. պնդում է, որ գտել է անհերքելի փաստեր անպարտ արձակված չորս յոյների յանցաւորութեան և երեք մեղադրեալ անձերի դէմ, որոնց պատ էր թողել յանձնաժողովը ապացոյցների չգոյութեան պատճառով։ Նէշիբ փաշա մեղադրում է նոյնպէս պարսկահայ յայտնի հրապարակախօս և անգլիահպատակ Շերազիին, որի կողմութեամբ ձերբակալվելը հաղորդել էինք մեր ընթերցողներին։ Այդ ձերբակալութեան դէմ բողոքել էին նախ Պարսկաստանի դեսպանը, յետոյ Բելգիական դեսպանը, որովհետև ձերբակալութիւնը կատարվել էր մի բելգիացու հիւրանոցում, իսկ այժմ բողոքում է խիստ կերպով և նրա ազատ արձակումը պահանջում, անգլիական դեսպանը, քանի որ յայտնի է որ և է փաստ չը կայ Շերազիի դէմ։ Սուլթան Նէշիբը, իր զահիճ-տիրոջ դուռը գալու համար աշխատում է պահել Շերազիին, նրա յանցաւորության մասին մատնացոյց փաստեր ստեղծելով։

—Միւս կողմից յունվարի 15-ին Պօլիս հասած հեռագիրները շատ ծանր են նը-կարագրում Եէմէնի դրութիւնը։ Աշխատ բանակի հրամանատար Ֆէյզի փաշա Ուսման հանելով՝ կարողացաւ Սանաա, Եէմէնի մայրաքաղաքը մտնել։ Բայց բանն այն է, որ խեղճ մարդը նորից պաշարվել է ապստամբ արաբներից, որոնցից ազատվելու համար օգնական զօրք է խնդրում։

—Թիւրքիայի մի այլ կէտում, Մուսուլում, ծագել են խոշոր անկարգութիւններ։ Քաղաքը մատնված է սարսափի։ Քիւրդերը քաղաքին ուէր են և ազդարարութիւնը ահաբեկված է։

—Խառն գրութեան մէջ է և Այրանիան, Եւրօպական այդ Քիւրդիստանը։ Սուլթանի թիկնապահները, երևի, ինչպէս գուշակել էինք, անձնատուր են լինում իրանց հարենիքում քամիների զուարճութիւնները։ Աւարիան, պարզապէս բռնելով ալբանական անկարգութիւնները, մեծ քանակութեամբ զօրք է համախմբում Բօսնայի սահմանի վրա, Տաշլըջայի շրջանում։ Նորին կարմիր Վեհափառութիւնը սատիկ անհանգիստ է։

—Կ. Պօլսի վճռաբեկ տեսակը, որին դիմել էին Ժօրնօս ինչպէս և նրա հետ դատապարտվող անձինք իրանց դէմ արձակված վճիռը բեկանելու համար, հաստատել է դատարանի նախորդ վճիռը։ Հակառակ բելգիական դեսպանի խիստ պահանջներին, Ժօրնօսը դեռ չէ յանձնված և, ասում են, յոյս էլ չը կայ որ երբ և իցէ յանձնվի։ Հաւանական են գրառում, որ Ժօրնօսի և նրա ընկերների մահվան դատավճիռը փոխվի ցմահ բանտարկութեան։ Դիարբեկիրում կամ Կոնիայում։

—Բրիւսսէլում մօտ ժամանակներս կայացաւ բոլոր երկիրներից եկած հրէական ներկայացուցիչների համաժողովը քննելու Ռուսաստանում գտնվող իրանց ազգայինների վիճակը։ Արտասանված ճառերի մէջ ամենից աչքի էր ընկնում Կիեվից եկած պրոֆեսսոր Մանդէլշտամի ճառը, որը հարցի պատմութեան մասին մի ընդհանուր հայեացք ձգելով, յայտնեց, որ հրէութեան վիճակը Ռուսաստանում միանգամայն անելանելի է։ Հազիւ թէ սահմանադրութիւնն էլ կարող լինի բարելաւել նրա վիճակը։ Միակ ելքն է՝ գաղթելը։ Համաժողովը ընտրեց մի առանձին մասնաժողով այդ հարցը ուսումնասիրելու համար վճռեց հաղորդել համաժողովի վճիռը ռուսաց կառավարութեան ի գիտութիւն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

2 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 փետրվ. № 213 հեռագրի սխալը ուղղում ենք։ Կօմս Սօլսկու խորհրդի նիստը կը կայանայ ոչ թէ յունվարի 2-ին, այլ փետրվարի 2-ին։ Պետերբուրգ վերադարձաւ ճանապարհի հաղորդակցութեան մինիստրը։ Դիտելով արևելեան և հարաւային երկաթուղիները և նրանց արհեստանոցները, ծանօթանալով նրանց կազմի հետ, լուսաբանելով աշխատանքի պայմանները, և գործադուլի պատճառները նա գլխաւորապէս ուշադրութիւն դարձրեց նրան շարժական մասի գործադրութեան վրա։ Վագոնների պարքերը կրճատել է, պարքի վճարումը յետաձգված է։ Դիւրացված է երկաթուղիների միմիայն վագոնների փոխառութիւնս հարցը։ Երկաթուղիների գործունէութեան ամենաառաջնակարգ նպատակն է այժմ երկաթուղիների և գործարանական շըրջանների վառելիքը ապահովել։ Ապա կը սկսեն դիւրացնել հանքերի արտահանութիւնը՝ նախ ապահովելով հացի պաշարը։ Մինիստրը համոզվեց, որ նօրմալ գործունէութիւնը ամենուրէք վերականգնում է և հիմք լը կայ բարութիւններ ստանալու։

Այսօր պետական խորհուրդը ընդունեց մինիստրների խորհրդի առաջարկած օրէնքի նախագիծը ժողովների մասին, որը պէտք է փոխարինէ հոկտեմբերի 12-ի օրէնքին։ Նոր օրէնքը անհամեմատ որոշ է քան հինը։ Ընտրողական ժողովները թոյլատրվում են առանց ոստիկանական ներկայութեան, բայց միայն պէտք է տեղեկացնել նրան ժողովների մասին։ Ընտրողական ժողովները բոլորովին չեն վերաբերում ոստիկանութեան։ Օրէնքը կը յայտարարվի եկող շաբաթ։ Յարկօէ-Սելօյում Թագաւոր Կայսրը ընդունեց բուդջետների հոգևորականութիւնը և բուրդների վիճաբանները, որոնք Սիբիրի բուդջաների հովանաւոր Բանդիռօսոմով Իրէյատուէէվի զեկավարութիւնի ներկայացան։ Թագաւորին ներկայացրի հաւատարիմ հպատակութեան ուղերձ շնորհակալական զգացմունքներով կը-րօնի ազատութիւն և հաւասար իրաւունքներ ապում համար, որը շնորհված է 1905 թ-ի փետրվարի 18-ի և հոկտեմբերի 17-ի հրովարտակներով, այլ և մատուցին Բուդջայի պատկերը, իսկ Թագուհուն՝ բուրեատների ձեռակերտ արծաթէ մի կուժ։ Դահաժառանգին յաւէրժութեան ստատածուհու պատկերը։ Նորին մեծութիւնները շնորհակալութիւն յայտնեցին պատգամաւորութեանը, իսկ Թագաւորը արժանացրեց զեղատա խօսքերի։

ԼՕՆԴՈՆ, 1 փետրվարի։ Հինգ ռուս քաղաքական փախստականներ արտաքսված են էմիգրանտների մասին եղած օրէնքների համաձայն։

ՆԻՄԿՕՎ, 1 փետրվարի։ Ինսպեկտորի վրա տարձանակ արձակող զինուորնս Բօպրինը լեհ է և ոչ հնդիկ, և յունվարի 27-ին զինուորական դատարանում պատասխան քննիչական օգտագործելիքի յանցաւորը։ Գնդակ արձակելով ու վրիպելով նա ուշաթափվեց և յետոյ նրան կապանաւորեցին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 փետրվարի։ Բուրեատների ներկայացած ժամանակ, Թագաւորը ասաց. «Ձեր գանգատները կը հրամայեմ քննել իր տեղում»։ Շնորհակալեմ եմ ձեր մշտական և հաւատարմութեան համար լինմ և Ռուսաստանին։ Ես ամենայաւ յիշողութիւններ եմ պահպանել Անդրբայկալի շրջանը իմ այցելութիւնից, Սիբիրի վրայով անցնելիս։

Զօրքերի Նապոլեանյից տեղափոխութեան կարգադրիչ մասնաժողովը հաղորդում է, որ վերջին շոգենաւը գերիներով Նապոլեանյից կը ճանապարվի փետրվարի 7-ին։ Մինչև յունվարի 21-ը եկել են 10 դեներալներ, 2 ադմիրալներ, 1066 սպաներ, 51,330 հոգի ցամաքային զօրքի զինուորներ, և 8,763 նաւատներ։

ԿԷՆԻԳՍԲԵՐԳ, 1 փետրվարի։ (Վոլֆ) Այսուեղից անցաւ դէպի Կոպէնհագէն Մեծ իշխան Միխայիլ Ալէքսանդրօվիչը։

ԲԵՐՏԻԶԵՎ, 1 փետրվարի։ Կայարանում կրանաւորվից 18 տարեկան հերոս Լէվիցկին, որ իրան անուանում էր Զէրկասկի գինուորի աշակերտ։ Նա ժիսոմիրից բերում էր մի կողով մէջը չորս հատ ռումբ դրած։

ԵԱՐՕՍԼԱՎԼ, 1 փետրվարի։ Քաղաքային վարչութիւնը վերջացրեց ընտրողական ցուցակների կազմելը։

ԿԷՐՉ, 1 փետրվարի։ «Южній Курьеръ»-ի այսօրվայ համարը գրաւված է։ Ընտրողական ցուցակները մատչելի է կայ ի ցոյց դնել փետրվարի 20-ին։

ՍԱՐԱՏՕՎ, 1 փետրվարի։ Երկու ամսվայ ընդհատումից յետոյ. կայացաւ սահմանադրական-ռամկավար կուսակցութեան բազմամարդ ժողովը։

3 Փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 փետրվարի։ Արտաքին գործերի, առևտրի և արդիւնաբերութեան մինիստրները և Աւստրօ-Ունգարական դեսպանը տարաբերել են նոր առևտրական և ծովային դաշնագիրը, փոխանակ 1860 թի սեպտեմբերի 2-ի Աւստրիայի հետ ունեցած համաձայնութեան։

ՎԻԵՆՆԱ, 2 փետրվարի։ Զինուորակոչութեան օրէնքը քննելու ժամանակ զինուորական մինիստրը ասաց դեպուտատների պալատում, որ քանի դեռ գոյութիւն ունի միլտարիսմը, գօրքի կազմակերպութեան համար պատասխանատու անձնաւորությունը պարտաւոր է պահանջել որ ցամաքային զօրքի ու նաւատորմի ռազմական պատրաստականութիւնը ապահովելու համար բոլոր անհրաժեշտութիւնները իրագործվեն։ Մինիստրը մատնացոյց արեց, որ զինուորական գործը Աւստրիայում կատարելապէս կաղում է մինիցոներ չը լինելու պատճառով և խնդրում էր պալատին ընդդատակ աջակցութիւն ցոյց տալ զինուորական տեսչութեանը երկրի հզօրութիւնը պահպանելու։ Մինիստրի ճառը որոտալից ծափեր առաջացրեց։

ԱԼԺԵՍԻՐԱՍ, 2 փետրվարի։ (Հաւաս) Ֆրանսիայի ու Գերմանիայի մասին հաղորդած լուրերը՝ թէ նրանք առաջարկում են Մարոքկոյում ոստիկանութիւն կազմելու ճիշտ չեն։ Բանակցութիւնները ժամանակ ընդարձակ ունեն, թէև պարզ է, որ երկու կողմերն էլ ձգտում են Ամերիկայի ու Իտալիայի աջակցութեամբ համաձայնութիւն կայացնելու։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 2 փետրվարի։ Պոտեմկինի զորքի դատաստանական քննութիւնը վերջացել է։ Վճիռը կը կայանայ փետրվարի 5-ին։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 2 փետրվարի։ Քաղաքի կենտրոնում և զօրքի մօտիկ, երկէ երեկոյեան երեք հոգի զինված կողոպտիչներ մտան կօտորակի բնակարանը, և 10,000 ռուբլուց աւելի կանխիկ դրամներ, և մի փոքր քանակութեամբ թանգագին իրեր յափշտակելով, անյայտացան։

ԲԷԼՕՍՏՕԿ, 2 փետրվարի։ Գործարանատէրերը բանւորական անտեսական հորձարանների առաջն առնելու նպատակով մտադիր են միութիւն հիմնել ու միջոցներ ձեռք առնել կանոնաւորելու գործարանատէրերի և բանւորների յարաբերութիւնները և նշանակել մշտական որոշ աշխատանքի վարձ։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 2 փետրվարի։ Դատարանը և պաշտպանները, Օչակովի դատաստանական գործի համար, այսուհետև Օչակով կուղեւորվին փետրվարի 5-ին։ Դատաստանութիւնը կը ըսկվի փետրվարի 7-ին և կը տևի երկու շաբաթ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 փետրվարի։ Գեներալ Լիենդվիշի հեռագիրը կոմս Վիտտէին Լօշատուից փետրվարի 1-ին։ «Վլադիվոստոկի, Խարբինի և Զիտայի զօրքերում խաղաղութիւն է տիրում։ Վլադիվոստոկի մուտքի առաջը մաքրված է սուռուցից»։

ՐԻԳԱ, 2 փետրվարի։ Ալէքսանդրօվսկի գիմնազիոնի տեսչի ընդունարանում, հինգերորդ դասարանի մի աշակերտ, փորձեց սպանել տեսուչ Օպոկովին, բայց խէնջարով կարից միայն վերարկուն, առանց վիրաւորելու նրան։ Աշակերտը բռնված է։ Վերադարձաւ «Кондоръ» կրէյսերը, բերելով Էգել կղզուց ծովային զօրքի վերջին կունդը, որ ուղարկված էր այնտեղ անկարգութիւնները վերջացնելու։ Կղզին կօզակներ են ուղարկվում։

ԵԼԻՍԱՎԵՏԳՐԱԴ 2 փետրվարի։ Հինգ հոգի կերպարանափոխված մարդկի ներս մտան կօտլարովի մագազինը և, իրանց անիշխանական անուանելով ու սպառնալով ռումբերով ու տարձանակներով, պահանջեցին 500 ռ. տալ Ծառայողին աշղովեց դուրս վազել և աղմուկ բարձրացնել։ Անիշխանականները անյայտացան, հրամայելով Կօտլարովին դրամները պատրաստել յաջորդ անգամվայ համար։

ՕՐԼՕՎ, 2 փետրվարի։ Նկատվում է չը լրացված թուով գիւղացիների հարանիքներ։ Դա բացատրում են պատերազմի վերջանալով և պահեստի զօրքերի վերադառնալով։ Տօնավաճառներում առևտուրը հետզհետէ լաւանում է։

ՎԻԵՆՆԱ, 2 փետրվարի։ Մլատօչէխերը պալատում հարցանկում արին, պահանջելով հիշտ բացատրութիւն տալ Աւստրօ-Ունգարիայի և Գերմանիայի միացեալ դաշինքի մասին Մարոկկոյի հարցի առիթով բարդութիւններ ծագելու դէպքերում թէ ինչ դիրք պէտք է բռնել։

ԼՕՆԴՈՆ, 2 փետրվարի։ «Таймсъ» թերթի Կալկաթայի թղթակիցը հեռագրում է, որ Սէիստանում եղած վարակիչ ջերմախտի բռնութիւնը դեռ չէ որոշված։ Բրիտանական և ռուսական իշխանութիւնները խորհրդակցում են թէ ինչ միջոցներով հիւանդութեան տարածվելու առաջն առնել։

3 փետրվարի

ԼՕՆԴՈՆ, 2 փետրվարի։ «Տրիբունան» Պեկինի թղթակիցը, հեռագրում է որ Պեկինի բոլոր օտարազգի միսիոներին նախազգուշացրել են սպառնացող վտանգի մասին։ Գերմանական միսիան ստացաւ մի լեռնային բատարէա ևս։ Դրութիւնը Զինաստանում բարձրանում է։ Եւրի անկարգութիւնները կը ծագին հարաւում, որտեղից կը տարածվ են դէպի հիւսիս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 փետրվարի։ «Правительств. Вѣстникъ»-ի հաղորդելով՝ վերջին շաբաթում արած խուզարկութիւնների և ձերբակալութիւնների ժամանակ—Լօզդում, Մինսկում, Վարշավայում, Վիլնում, Եարօսլավում, Մէվատօպօլում, Պետերբուրգում, Ռուբայխում, Թիֆլիսում. Պէնզայում, Սամարայում, Գրոզնում, Բէլօնում, Օդէսայում, Բէլստօկում—գտնված են շատ ռումբեր, տարձանակներ, վիտոտվկաներ և պայթուցիկ նիւթեր։ Դնեպրօվսկի գաւառում ձերբակալված են 5 հոգի, որոնցից մինը Գոր էր անուանում իրան, երեքը դեսպան՝ և մինը գեներալ։ Ինքնակոչը հագած էր կարմիր գլխարկ սպասարտով։

ԼԻԲԱՎԱ, 2 փետրվարի։ Ոստիկանական վերակացու Գրօզօն ծանր վիրաւորված է տարձանակի չորս հարուածներով. յանցաւորը բռնված է։

ՐԻԳԱ, 2 փետրվարի։ Առաւօտեան անյայտ կողոպտիչներ ներս խուժեցին մի գեղեցիկ թաղում ապրող այրի հրէուհի Գէրցբերգի բնակարանը, կապեցին տանտէրը, սպանեցին Գէրցբերգին և կողոպտելով բնակարանը—անյայտացան։

ՄԱՐԻՈՒՊՕԼ, 2 փետրվարի։ Հիմնվեց հոկտեմբերի 17-ի կուսակցութեան մասնաճիւղ։

ԲԷԼԳՐԱԴ, 2 փետրվարի։ Կուսակցական խմբերը—կառավարութեան և սկուպշտինայի նախագահի կամայական գործողութիւնների պատճառով—վճռեցին չը պաշտպանել այլևս վերջինիս։—Աւստրօ-Ունգարիան իր պահանջներից յետ չէ կանգնում առևտրա-դաշնագրական հարցում։

ԼՕՆԴՈՆ, փետրվարի 2-ին։ (Բէյտեր)։ Բալֆուրը՝ Զեմբերլէնին գրած նամակում ասում է, որ ունիոնիստների գործունէութիւնը առաջվայ նման պէտք է զլխաւորապէս նուիրված լինի ֆիսկալ բարենորոգման ձգտէ՝ օտար գործարանատէրերի համար մտցնելու տեղական չափաւոր տարիֆ և օտար հացի վրա դնելու քիչ հարկ։ Իր պատասխանում Զեմբերլէնը ասում է. «Ուրախութեամբ ընդունում եմ ձեր ցոյց տուած քաղաքականութիւնը, ամբողջապէս կը լինեմ ձեր տրամադրութեան ներքոյ»։

ԵԱՐՕՍԼԱՎ, փետրվարի 2-ին։ Այսօր գաւառական զէմստվային ժողովը—մտքերի երկար փոխանակութիւնից յետոյ—որոշեց—վարչութեան գործողութեան ձեր՝ քաղաքական գործադուլի պատճառով արձակած 45 ծառայողների նկատմամբ—ընդունել օրինաւոր։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 2 փետրվարի։ «Русь» թերթի հաղորդած լուրը—Տէրիօկում արած խուզարկութիւնների և զէնք գտնելու մասին—հերքվում է ֆինլանդական լրագիրներում տէրիօկի բնակիչներից։

ՐԻՇԻՑԱ, 2 փետրվարի, Կայացաւ հողատէրերի և գիւղացիների խորհրդակցութիւնը—միջոցներ մշակելու գիւղացիներին հանգստացնելու և հողային հարցը լուծելու համար։ Առաջարկված է կազմել դասախօսութիւններ, տարածել բրօշիւրներ հոկտեմբերի 17-ի և նոյեմբերի 3-ի մանիֆէստների ոգեթով։ Վճռված է օրքան կարելի է շուտ հրատարել նոր ժողով։ Մէնամայն մերժված է բոլոր գիւղացիներին 15-ական դեսյատին հող բաժանելու առաջարկը։ Անհրաժեշտ է ճանաչված գիւղացիական բանկի միջոցով վերջ դնել հողաղուրկ, աղքատ և անմեցուկ գիւղացիներին հող տալը։ Որոշված է միջնորդել՝ տալու գիւղացիներին միջոց և փոխառութիւն, բանկի միջոցով, և կազմել միջնորդ յանձնաժողով հողեր գնելու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Հուվկա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մկրատաս. հ.
ԶԻՆՕՎԱՆ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Զ. Ի. ԱՌՏՏԻՆԵԱՆ—11—12 ժ. մարթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ղ. Ի. ԳԶԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺՇԿ ՇԱՀՐԻԻՆԵԱՆ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԴՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ և ծաղկահան։
Ռ. Ֆ ԱԲԵԱՆ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԴԱԶԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Հատուցողներ (գօնորար մէջ) և օգնականի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

Ռուսերեն լեզուով ցնդ ցանկանում եմ հայոց լեզուի մասնաւոր դասեր ունենալ հայ ընտանիքներում. ցանկացողները թող դիմեն Թիֆլիս Հաւլաբար Ա-բրահամեան փող. № 15։ Տ. Աննա Մանուկեան։ 1—3